39(र)
र-22

1

## ՄԻՆԱՍ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՄԴԵՑՒՈՑ

# ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ

---

1870—Ռ․ՅԺ․Թ

ՏՊԱՐԱՆԻ Ս․ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ․

Ա/17237

ՄԻՆԱՍ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՄԴԵՑԻՈՅ

# ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ

**1870**—ՌՅԺԹ

ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԵԱՅ Դ

ՎԵՀԱՓ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

1952 Թ.

БИБЛИОТЕКА

2935

10837

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ոչ երբեք զերևելի էինք և զկարևոր հը-
նութիւն 'ի նիւթ ազգային պատմութեան,
այլ երբ նշխար էինք մատենագրութեանց
նախնեաց՝ յաւելումք զյառաջակայս զայս
Աշխարհագրութիւն Թագաւորաց մերոց զա-
րարեալն 'ի Մինաս վարդապետէ Համդեց-
ւոյ՝ 'ի Պատրիարգէն Ս. Երուսաղեմի՝ տը-
պագրութեամբ՝ 'ի Թանգարան Հայերէն
գրութեանց:

Բազումք են 'ի սմին սխալմունք և պա-
կասութիւնք պատմաբանականք թէ՛ 'ի
կարգս և թէ՛ 'ի գործս Թագաւորաց մերոց
և իշխանաց, թողումք զի և Հայկաբանու-
թիւնն է զուրկ յոճոյ:

Ի վերջ Աշխարհագրութեանս այսորիկ
գտանի պատմութիւն Կայսերացն Հռով-
մայեցւոց՝ նոյնպէս լի թերութեամբք:

Ի ՌՃԽԷ (1698) Ազգային Թուարերութեան մերում գրեալ է՝ սոյն այս ազգաբանութիւն ընդ պատմութեան Հռոփսիմեան կուսանաց 'ի նոյն վարդապետէն Մինասայ:

Զայնու միջոցաւ էր Պատրիարգ Ս. Երուսաղեմի Մինաս անուն ոմն վարդապետ Համդեցի (Տիգրանակերտացի), որ թուի մեզ՝ նոյն հեղինակ գործոյս այսորիկ. եթէ չգտանէր այլ ոք նովին անուամբ վարդապետ Համդեցի, որ չիք յիշատակեալ 'ի պատմութիւնս և 'ի յիշատակարանս՝ ոչ յառաջ և ոչ յետոյ:

Իսկ օրինակ այսր Ազգաբանութեանս մի միայն գտանի 'ի մատենադարանի Ս. Աթոռոյս Կաթուղիկէ Էջմիածնի, և այն՝ ունի գոլով գրչասխալս և զտառասխալս յանուանս և 'ի շարագրութիւնս: Այլ թէ ե՞րբ, ո՞ւր և յումմէ՞ իցէ օրինակեալ, չիք 'ի միջի ծանօթութիւն կամ յիշատակարան ինչ:

# ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՀԱՅՈՑ՝ ՍԿՍԵԱԼ Ի ՆԱԽԱՀՕՐԷՆ ԱԴԱՄԱՅ՝ ՈՐԴՒՈՑ ՅՈՐԴԻՍ, ՀԱՄԱՌՕՏԵԱԼ՝ ՈՐՊԷՍ ԶԳԱՒԱԶԱՆԱԳԻՐՔ՝ ԹԷ՝ ՈՒՍՏԻ՞ ԵՆ ՀԱՅՔ ԵՒ ՈՐՈ՞Յ ԱՂԱԳԱՒ ԿՈՉԵՑԱՆ ԱՐԱՄԵԱՆ։

ԱԴԱՄ ծնաւ զՍէթ. Սէթ ծը-
նաւ զԵնովս. Ենովս ծնաւ
զԿայնան. Կայնան ծնաւ
զՄ՝աղաղեէլ. Մ՝աղաղեէլ ծնաւ զՅա-
րեթ. Յարեթ ծնաւ զԵնովք. Ենովք
ծնաւ զՄ՝աթուսաղայ. Մ՝աթուսաղայ
ծնաւ զՂամէք. Ղամէք ծնաւ զՆոյ։
Նոյի ժամանակն յայտ է ամենեցուն,
եղև ջրհեղեղն։ Եւ աստուստ ազգա-

բանութիւն ազգիս Հայոց՝ յորդւոց յորդիս համառօտեալ որպէս զգաւազանագիրք, թէ ուստի՞ են Հայք և որո՞յ սակի կոչեցան Արամեան կամ Արմենեան։

Որպէս Թարգմանիչն Մովսէս Խորենացին պատմէ՝ երկրորդ հօրն աշխարհի Նոյի երիս որդիս ցուցաւ, Սէմ՝ Քամ՝ Յաբեթ։ Եւ մեր ազգի գաւազանն ՚ի Յաբեթայ կրտսեր որդւոյն սերեցաւ այսպէս. Նոյ ծնաւ զՅաբեթ. Յաբեթ ծնաւ զԳամեր. Գամեր ծնաւ զԹիրաս. Թիրաս ծնաւ զԹորգոմ. Թորգոմ ծնաւ զՀայկ, որ է վեցերրորդ ծնունդ Նոյի նահապետի։

Այս Հայկ մի էր ՚ի ՀԲ. տանուտեարց, որք շինեցին զաշտարակն, այր քաջ և երևելի։ Եւ յետ փլանելոյ աշտարակին՝ Ներրովթն՝ որ է Բէլ, դառնացաւ ՚ի վերայ ամենեցուն։ Եւ Հայկն էառ զորդի իւր զԱրմենակ և զայլ որդիսն և զթոռունսն՝ Յ արամբք՝ ընտանեօք և ընչիւք, և եկն յեր

կին Արարատու, և շինեաց իւր տուն և բնակութիւն անդ։ Տեսեալ զայն Նեբրովթին, կոչեաց զՀայկ 'ի Բաբելոն, թէ՝ եկ ի ներքոյ իշխանութեան իմոյ կացիր։ Եւ իբրև ոչ հնազանդեցաւ Հայկն, Նեբրովթն առեալ զզօրսն իւր՝ եկն 'ի վերայ Հայկայ պատերազմաւ՝ 'ի սպանանել զնա։ Եւ Հայկն սակաւ զօրօքն ել ընդ դէմ Նեբրովթին և եհար նետիւ 'ի կուրծսըն Նեբրովթին, և սպան զնա, և դարձաւ 'ի տուն իւր։ Որոյ յանունն կոչեցաք մեք՝ ՀԱՅՔ, և երկիր մեր՝ ՀԱՅԱՍՏԱՆ։

Արմենակ որդի Հայկայ՝ բնակեցաւ 'ի լեառնամէջ դաշտին, և կոչեաց զլեառն՝ Արագած։ Սա կեցեալ ամս յոլովս, ծնանի զԱրմայիս և զայլ բազումս՝ որ երկու եղբարք էին, Խոռ՝ յորմէ ազգն Խորխոռունեան, և Մանաւազ՝ յորմէ ազգն Մանաւազեան։ Եւ եղ որդին Մանաւազայ՝ Բազ՝ 'ի ծովն Աղի, և բնակութիւնս շի-

նեաց անդ. յորմէ ազգն Աղուանեաց 'ի գաւառն Սիւնեաց:

Արամայիս՝ որդի Արմենակայ՝ շինեաց տուն յեզր գետոյն Երազու, և յանուն իւր կոչեաց զնա՝ Արմաւիր, և զգետն կոչեաց յանուն թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ: Եւ զորդին իւր զՇարայ շատակեր և յոլովածին առաքէ 'ի հիւսիս 'ի դաշտ մի արգաւանդ, բնակիլ անդ. յորոյ անունն կոչեցաւ երկիրն՝ Շիրակվան (կամ) Շիրակավան, այսինքն՝ Շիրակաւան, և լցաւ աշխարհն մարդկամբ:

Ամասիա՝ որդի Արամայիսայ. սա բնակի յԱրմաւիր: Սա շինեաց Բ. տուն՝ մերձ 'ի լեառն Հարաւոյ, և ետ երկու որդւոցն՝ Փառոխայ և Ցոլակայ կայտառին, և կոչեաց զանուն նոցա՝ Փարախոտ և Ցոլակերտ: Եւ զլեառն կոչեաց յանուն իւր՝ Մասիս:

Գեղամ՝ որդի Ամասիայի՝ այր և կայտառ: Սա ծնաւ զՀարմայ: Սա շինեաց բլ-

բազում տեղիս և գեղս ծովակին Գեղամայ, որ կոչեցաւ Գեղարքունի։ Իսկ որդւոյ իւրոյ Սիսակայ՝ որ էր անձնեայ և բարետեսիլ և կորովաբան, սահման հատանէ 'ի Ծովէն մինչև 'ի գետն Երասխ ընդ դաշտըն Բաջավազ, որ է երկիր Սիսակայ, և կոչեցաւ Սիսական, որ է Սիւնիք։ Յետոյ 'ի սորա ծննդոցն՝ առ Արտաշէսիւ՝ Վարաժ անուն ումն 'ի վերայ որսոց լինի կարգեալ. յորմէ ասեն լինել տունն Վարաժնունի։

Հարմայ՝ որդի Գեղամայ։ Սա ծնանի զԱրամ. և սակաւակեաց լեալ՝ մեռանի։

Արամ՝ որդի Հարմայի։ Սա բազում գործ քաջութեան եցոյց պատերազմաւ. և ընդարձակեաց զաշխարհն իւր ընդ չորս կողմանս։ Յորոյ անունն ամենայն ազգք՝ զազգս մեր կոչեցին Արամեան (Երմենի և Արմենեան)։ Զսա Թագաւորն Նինոս՝ իւրըն երկրորդ կոչեաց պատուելով։ Իսկ

համարձակութիւն տայ նմա Վարսակալ ունել մարգարտեայ: Մ՝եդացիք յարևելից եկին ԾՌ. զօրօք հարկաւորել ըղձայս: Եւ Արամ քաջ ել ընդ դէմ նոցա և կոտորեաց զնոսա: Եւ զՆիւքար կոչեցեալ՝ զբռնաւորն Մ՝արդէս կալեալ եբեր 'ի պարիսպն յԱրմաւիր: Բարշամ ոմն Ասորի՝ հսկայ, զոր յետոյ 'ի շատ ժամանակս իբրև զաստուած պաշտեցին ազգն Ասորոց, եկն 'ի վերայ Արամայ ԽՌ. հեծելօք և ԵՌ. հետևակօք: Եւ Արամ ել ընդ առաջ նորա և փախստական արար զզօրսն նորա: Եւ Բարշամ անկաւ առաջի զինու նորա:

Պայապիս Քաղյադ (Քաղեայ) տիտանեան ոմն, որ տիրէր 'ի մէջ երկուց ծովուց Պոնտոսի և Ովկիանոսի, և յառաջ խաղացեալ էր, գնաց Արամ 'ի վերայ նորա և կոտորեալ հալածեաց զզօրս նորա մինչև յեզր ծովուն և կղզւոյն, և դարձաւ 'ի Կապադովկիայ: Եդ զՄ՝շակ ոմն անդ բռնաւոր, և հրամայեաց շինել քաղաք. զոր

և կոչեաց Մաժակ՝ այն է՝ Մաժակ Կեսարիա։ Նա և եթող ընդ նմա անձինս Ժ․Ռ․ և հրամայեաց բնակչացն լեզու Հայկական ուսանել. որ կոչի մինչև ցայսօր երկիրն այն Յունաց լեզուաւն Պրօտօն Արմենիան, այսինքն՝ Առաջին Հայք, և անտի մինչև յիւր աշխարհն ելից մարդկամբ։ Նա և յետոյ Մաժակն՝ վասն տիրապետելոյ Կայսերացն Հռոմայ՝ կոչեցաւ Կեսարիա։ Այսու ժամանակաւ հայրն հաւատոյ՝ Աբրահամ՝ ծանօթացաւ Աստուծոյ։

Արայ գեղեցիկ՝ որդի Արամայ. սա պատուեցաւ ՚ի Նինոսէ որպէս և հայրն իւր Արամ։ Իսկ յետ մահուան Նինոսի՝ կին նորա վավաշն Շամիրամ՝ կոչեաց զԱրայն գեղեցիկ՝ երթալ և առնուլ զնա ՚ի կնութիւն։ Նա իբրև ոչ կամեցաւ Արայ, յետոյ այլ գեսպան՝ ընծայիւք առաքէր՝ թէ՝ եկ առ իս և կատարեա զկամս և դարձիր յերկիր քո. և Արային վասն ոչ հաւանե-

լոյ նմա՝ ելեալ Շամիրամ բազում հեծելօք եկն ՚ի պատերազմ ՚ի վերայ Արային։ Եւ պատուէր ետ զօրաց իւրոց՝ թէ, կենդանւոյն կալցեն զԱրայն։ Եւ իբրև խմբեցաւ մարտն, յաղթեցան Հայք և անկաւ Արայն ՚ի մէջ զօրացն և մեռաւ։ Եւ ետ գտանել զդին նորա՝ Շամիրամ, և զարդարեալ թաղեաց անդ. զԿարդոսն Արայի զեղեցիկ որդին ընդունել ետ Շամիրամ, և առ ինքն պահէր. և վասն սիրոյ հօր նորա՝ զանուն Կարդոսին եդ Արայեան Արայ։ Եւ Շամիրամ իւր պարոնի մի*) հետ նենգ ունելով վասն ապստամբութեան նորա, որ նստէր ՚ի Վան, ե՛լ ՚ի վերայ նորա ՚ի պատերազմ, և յաղթեցաւ. և հետևակ իւր Նինուաս՝ որ է Շամէս, պահ գտեալ եհաս և սատակեցոյց զմայրն իւր Շամիրամ զվավաշն։ Անուշավան՝ որդի Արայեան Արայի, հանճարեղ և հարուստ յիրս և ՚ի բանս, վերստին էառ զմասն աշ-

*) Բառ այս է գրեալ յօրինակին, զոր յանձնեմք քննողաց իմանալ։

խարհիս Հայոց, ապա և զբովանդակն օգնականութեամբ բարեկամացն։ Զի Նինուաս՝ շատ նեղութիւն հասոյց Անուշաւանին վասն սիրելոյ մօրն իւրոյ զհայրն նորա։ Իսկ յետ այսորիկ չեղև ժառանգութիւն Հայոց որդոց յորդիս։ Այլ ինքնակոչ իշխանք մինն զմիւսոյ հետ կարգեցան, որք են այսոքիկ։

Պարէտ. Արբակ. Զաւան. Փառնակ. Սուր։ Առ սորին ժամանակաւ Յեսու որդի Նաւեայ եբեր զԻսրայէլ յերկիրն Աւետեաց, որ 'ի Քանանացւոց ոմանք փախեան 'ի Հայս. յորոց մինն Քանանիդաս, յորմէ ազգն Գնթունեաց։ Յետ սորա Հաւանակ. Վաշտակ. Հայկակ, որ Բելոքոսիւ սպանաւ։ Ամբակ. Առնակ. Շաւարշ. Նորայր. Վստամ. Կար. Գոռակ. Հրանտ. Ընծակ. Գլակ. Հորոյ. Զարմայր։ Սա օգնական լեալ Պրիամու թագաւորին Տրովայու, որ յետոյ Էսկի-Ստամպոլ կոչեցաւ, և 'ի պատերազմի

Հելլենացւոց, զոր Հոմերոս պատմատագ-եաց, անկեալ մեռաւ Զարմայր:

Պերճ. սա էր յաւուրս Մարգարէին Դաւթի արքային Իսրայէլի: Երրուն. Բա-զուկ. Հոյ. Յուսակ. Կայպակ. Սկայորդի: Եւ սա եղին փախստական որդիքն Սենե-քերիմայ թագաւորին Ասորեստանի, որք սպանին զհայրն իւրեանց, որոյ սատակե-ցան զօրք ի հրեշտակէն՝ ՃՁԵՌ. արք 'ի գաւառն Երուսաղէմի յաւուրս Եզեկիայի և Եսայեայ մարգարէի: Պարոյր՝ որդի Սկայորդոյ. սա օգնական լեալ Վարբակայ թագաւորին Մարաց՝ բարձին 'ի միասին զթագաւորութիւնն Ասորւոց, որ էր վեր-ջինն Սարդանապալոս:

Հրաչեայ՝ որդի Պարուրայ, բոցակնագոյն և պայծառատիպ. առ սորա ժամանա-կօք գերեաց Նաբուգոդոնոսոր զԵրու-սաղէմ: Եւ 'ի գերելոցն Հրէից գլխաւոր մի Սմբատ անուն՝ խնդրեաց և էառ և առ

ինքն պատուով բնակեցոյց. ուստի յառաջ եկին ազգն Բագրատունեաց: Յետ Հրաչեի առնուն զԹագն՝ Փառնաւազ. Պաճոյճ. Կրունակ (Կոռնակ.) Փաւոս. Հայկակ. Երուանդ, և սորա որդին է Տիգրան:

Տիգրան ինքն և ժամանակ իւր ցանկալի. 'ի բազում ազգաց (խարաճ*) էառ. զՅոյնս նուաճեաց. զաշխարհս ելից խաղաղութեամբ. ինքն գեղեցիկ և արդար 'ի դատաստանի, և ուտելն պարկեշտ, և զհարկատուսն այսպէս մարդասիրութեամբ սփոփեցոյց: Յաւուրս սորա գեղեցիկ քաղաքացւոց նման եղեն, և քաղաքացիք այլ առաւել գեղեցկացան Թէրպիյէթով**), ընչիւք և ապրանօք, ականակուռ և ոսկեղէն հագուստով: Աժդահակ Թագաւորն Մարաց նախանձեալ

(*) Տուրք կամ հարկ արքունի

(**) Քաղաքավարութիւն և կրթութիւն

ընդ սա, 'ի ձեռն կնոջ իւրոյ՝ որ էր քոյր Տիգրանայ, եւ 'ի վերայ նորա պատերազմաւ. և ինքնին եհար նիզակաւ 'ի փոր նորա և սպան զԱժդահակ, որ 'ի մեր լեզու Վիշապ թարգմանի: Սա շինեաց զանուանի քաղաքն՝ որ յեզր Տիգրիս գետոյն՝ որ է Յամիթ (Տիարպաքիր), և կոչեաց զնա յանուն իւր Տիգրանակերտ:

Տիգրանայ Դ. որդիքն էին, Պապ, Տիրան, Վահագն և Արաւան: Եւ Արաւանայ յորդւոց յորդիս փոխանորդեցին կարգաւ այսպէս. յԱրաւանայ՝ Ներսեհ. 'ի Ներսեհէ՝ Զարեհ, ուստի ազգն Զարեհաւանեան. 'ի Զարեհէ՝ Արմոգ. յԱրմոգայ՝ Բագամ. 'ի Բագամայ՝ Վան. 'ի Վանայ՝ Վահէ: Ի սորա ժամանակին եկեալ ի Յունաստանէ Աղեքսանդր Մակեդոնացի, և մարտնչեալ ընդ նա՝ սպանաւ Վահէ. և իշխանութիւնն Հայոց ազգին դադարեցաւ, որպէս և ամենայն իշխանութիւնք 'ի հրամանս Աղեքսանդրի հնազանդեցան:

Յայսմհետէ մինչև 'ի թագաւորութիւնն Վաղարշակայ 'ի Հայս՝ ոչինչ ունիմ ասել, ասէ գիտունն մեր Խորենացին. զի շփոթեալ երկիրն՝ այր զայրամբք ելանէին տիրել աշխարհիս մերոյ. վասն այսորիկ դիւրամուտ եղև յաշխարհս մեր Արշակ: Այս Արշակ մեծ թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ աշխարհիս Հայոց. զոր յերկրորդ գաւազանին ցուցանելոց եմք յառաջիկայդ. և այս առաջին գաւազանս ազգիս Հայկայ ցուցաւ սկըսեալ 'ի Նոյայ Նահապետէ՝ որդւոյ Յաբեթի: Եւ պատմագիրս Մովսէս թարգմանիչ Խորենացի Քերթողահայրն՝ յերիս այս պարծի յիրաւի արժանիս յիշատակութեան 'ի Հայկ, յԱրամ և 'ի Տիգրան:

## ԳԱՒԱԶԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ.

Յետ մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորեաց 'ի Բաբելոն՝ Սելեւկիոս՝ ամս ԼԱ. Անտիոքոս Սօտէր՝ ամս ԺԹ. Անտիոքոս Թէոս՝ ամս ԺԱ. (յաւուրս սորին) ապստամբեցան Պարթեւք 'ի Մակեդոնացւոցն. քանզի նախ քաջն Արշակ 'ի զաւակէն Աբրահամու՝ 'ի Քետուրական ծննդոցն էր, որ թագաւորեաց 'ի Պալխ՝ ամս ԼԱ. եւ ապա որդին նորա Արտաշէս՝ ամս ԻԶ. եւ ապա որդի նորա Արշակ մեծ՝ ամս ՊԺ. որ եկին եւ սպան զԱնտիոքոս Թէօսն, եւ զեղբայր իւր Վաղարշակ՝ հիւսիսոյ եւ արեւմտեան աշխարհիս թագաւոր կացոյց. եւ որդւոց յորդիս՝ վասն եղբօրն Արշակայ, կոչեցան Արշակունիք: Վաղարշակ՝ այր քաջ եւ խոհեմ, սահմանեաց կարգս արքունական, Նախարարական, Նահապետական՝ Կողմնակալաց՝ ազգաց օձախից*)

(*) Տոհմ, զարմ.

ցեղից՝ սերհատից*)՝ գաւառաց՝ գաւառապետաց. եդ անուանս և սահմանս քաղաքաց՝ շինից՝ տանց՝ դաստակերտաց՝ զօրաց և զօրագլխաց. և յՄիքրոնիս եդ Թագագիր 'ի Բագրատունեաց ցեղէ, որք յաղգէն Խորայկլացւոց խառնեցան 'ի Հայս. Էլ Օքնամ՛իր, Ճ՛աշ՛իր, Գոինեպան՝ որք են Գնունիք՝ 'ի վերայ գինւոյ, և Արծրունիք՝ 'ի վերայ Թռչնոց, Սպանդունիք՝ 'ի վերայ զենլոյ. Սարհապանս, Դռնապանս՝ և այլ տոհմախաս կարգաւորեաց, (և իշխեաց) 'ի Յ՝Ծրին ամս ԻԲ. և մեռաւ քաջապէս:

Արշակ՝ որդի Վաղարշակայ՝ (Թագաւորեաց) ամս ԺԳ: Սա նախանձաւոր և հետեւօղ լեալ առաքինութեանցն, հայրենի քաջութեամբ և նորոգութեամբ յաղթօղն 'ի պատերազմի՝ գերեաց զազգն Պոնտոսի. և յեզր ծովուն Պոնտոսի՝ արձան կանգնեաց. որում Յոյնք՝ իբրև Աստուծոյ՝ երկրպագեցին:

(*) Սահման, սահմանագլուխ

Արտաշէս՝ որդի Արշակայ՝ թագաւորէ ամս ԻԵ: Սա յառաջադէմ եղեալ՝ ոչ հաճեցաւ լինել Երկրորդ Պարսից, այլ զՊարթեւաց և զՊարսից թագաւորն՝ իւրն Երկրորդ արար: Եւ խրոխտ եւ ՚ի պատերազմ անհամար զօրօք, զինեալ յարեւմուտ՝ զԹագաւորն Լիւդացւոց՝ զԿրեսոս ըմբռնեաց և ՚ի տապակի էարկ. զպղնձի Յունաց Աթենացւոց՝ յաշխարհն իւր եբեր ՚ի Հայս. զոռոր արեւմուտս և Ովկիանոս Ծովն հնազանդեցոյց և ընդ հարկաւ արար: Գրեալ են Յոյնք և Լատինք՝ զպատմութիւն սորա գովաբանութեամբ: Զոր և Աղեքսանդրի նմանեցուցեալ ասեն. Աղեքսանդրի զօրացն փոքրն զՃառագայթս արեգականն արգելոյր, բայց յԱրտաշիսի զօրաց նետաձգութեանէն՝ միջօրեայ արեգակն մթնայր, այսինքն՝ նետից շուքն ամպի պէս երեւէր յերկինս. և մինչեւ յՈվկիանոս Ծովուն կային զօրքն սորա շփոթեալ հարան ընդ միմեանս և խոցեցին զԱրտաշէս. ուր և մեռաւ թագաւորեալ ամս ԻԵ:

Տիգրան՝ որդի Արտաշիսի՝ ամս ԼԳ։ Սա զՅունաց զօրսն կոտորեաց 'ի պատերազմի, և Բ. անգամ զՀռոմայեցի եկեալ զօրսն յաղթեաց, զԳաբինոս փախոյց, զԿրասոս մեռոյց, զՄիհրդատ կալաւ, զՍամարիոյ և զԵրուսաղէմի Հրէայսն գերի վարեաց, զԹագաւորն Հիւրկանոս գերի էած, և զԱնտիոքոս թագաւոր կացոյց 'ի Հրէաստան. Թագաւորեաց ամս՝ ԼԳ։

Արտաւազդ՝ որդի Տիգրանայ՝ պղերգութեամբ և որկրամոլութեամբ կեայր, վասնորոյ սպանաւ 'ի թշնամեաց, թագաւորեալ ամս՝ Բ։

Արշամ՝ եղբայր Տիգրանայ՝ որդի Արտաշիսի. մանկապանն Հերովդէս թագաւոր Հրէաստանի՝ խրոխտալ կամէր 'ի վերայ սորա՝ և յաղթեցաւ սատակեցաւ։ Իսկ Արշամ խաղաղական կենօք կեայր և մեռաւ թագաւորեալ ամս՝ Ի։

Աբգար որդի Արշամայ՝ ամս ԼԸ։ Խօսրա երկրորդ ամին հարկեցան Հայք ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց. զի եւ հրաման յՕգոստոս Կայսերէն՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տեղիս՝ ասէ սուրբ Աւետարանն, յորում ամին Ծնաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ Սա Աբգար՝ գիր գրեաց առ Քրիստոս, եւ ընկալաւ զպատկերն տէրունական՝ 'ի վերայ դաստառակի, եւ բժշկեցաւ յախտէն։ Սա շինեաց զՈւրհա եւ արար թախտ*)։ Թադէոս Առաքեալն Քրիստոսի եկն 'ի Հայաստան, եւ հաւատացեալ Աբգար 'ի Տէր՝ մկրտեցաւ տամբք իւրովք, կոտորեաց զկուռս եւ զկռատունս. գրեաց Աբգար Հռովմայ Կայսերն եւ Պարսից թագաւորին՝ զհաւատալն իւր 'ի Քրիստոս՝ յորդորելով զնոսա 'ի սուրբ հաւատս, եւ զՀրէայսն չարախօսեաց նոցա. եւ մինչ կամէր կոտորել զՀրէայսն՝ վախճանեցաւ։

(*) Աթոռանիստ, թագաւորանիստ

Անան՝ որդի Աբգարու՝ թագաւորեաց յԵդեսիայ. և Սանատրուկ՝ քեռորդի Աբգարու՝ թագաւորեաց յարևելս ամս Լ: Սա հաւատաց 'ի քարոզութիւն առաքելոյն Թադէոսի, և դարձեալ եթող զհաւատն և սպան զսուրբն Թադէոս և զՍանդուխտ դուստրն իւր միայուհին, որպէս գրեալ կան 'ի ճառս իւրեանց:

Երուանդ՝ ամս Ի. որ էր յԱրշակունի կնոջէ: Սա սպան զորդիսն Սանատրկոյ. շինեաց զԵ̦ան և զԲագարան և զանտառ ծննդոց՝ վասն որսոյ և զբօսանաց, և սպանաւ 'ի զօրացն Արտաշիսի:

Արտաշէս՝ որդի Սանատրկոյ՝ ամս ԽԱ: (սա) սպան զԵրուանդ և ինքն թագաւորեաց. շինեաց զԱրտաշատ քաղաք՝ ուր խառնին Մեծամօր և Երասխ, և փոխեաց 'ի նմա զգեղեցկութիւնն Երուանդեայ քաղաքին: Յաւուրս սորա լեռնայինն և դաշտայինն մարդ անգործ ոչ գտաւ յաշխարհն

մեր։ Սա զզօրսն Ալանաց եհար, զորդի արքային նոցա ըմբռնեաց, զդուստր արքային էառ ի կնութիւն եւ մեծ հարսանիս արար։ Նա եւ զեղբայր նորին ազատեաց եւ կացոյց թագաւոր Պարսից յաթոռ հօրն նորին. եւ երկու անգամ զզօրսն Հռոմայեցւոց յաղթեալ հալածեաց յԱսորեստանէ. եւ մնաչ՚ն եւ թագուհին՝ որ մեծ եւ շքեղ եւ երեւելի եղեւ. թագաւորեաց ամս ԽԱ։

Արտաւազդ՝ որդի Արտաշիսի յորս եկեալ եւ խելագարեալ անկաւ յերիվարէն ի խոր մի եւ անհետ կորեաւ ի ձորն, զի ոչ գտին զդի նորին. թագաւորեալ ամս Բ։

Տիրան՝ որդի Արտաշիսի ամս ԻԱ։ Սա մտերմութեամբ կացեալ ընդ Հռոմայեցիս, եւ խաղաղութեամբ թագաւորեաց։ Սա միայն որսոյ եւ զբօսանաց պարապեցաւ ի կեանս իւր։

Տիգրան՝ որդի Արտաշիսի՝ թագաւորեաց ամս ԽԲ: Սա գնաց 'ի Միջերկրեայս 'ի պատերազմ, և ըմբռնեցաւ 'ի Յունաց. զոր եթող Ղուկիանոս կայսրն, և ետ նմա զԱռափի ազգական իւր 'ի կնութեան: Իւ-բրև եկն Տիգրան 'ի Հայս, եթող զկինն զայն, և 'ի նմանէ ծնեալ զորդին ընդ այլ Նախարարութիւնս կացուցանէր, զի մի անուանեսցին Արշակունիք:

Վաղարշ՝ որդի Տիգրանայ՝ ամս Ի: Սա շինեաց զՎաղարշաւան 'ի Բասէն, և պատէ պարսպաւ զՎարդգէս 'ի վերայ Քասաղ գետոյն, և անուանեաց Վաղարշապատ. և 'ի պատերազմի Խազրաց և Բասլաց քաջապէս մեռաւ:

Խոսրով՝ որդի Վաղարշայ՝ ամս ԽԲ: Սա զհօրն մահուն պահանջելով զվրէժն՝ գնաց յաղթեաց հիւսիսայնոցն. և ապստամբեալ 'ի Պարսս՝ զթագաւորն Արտաշիր՝ մինչև 'ի Հնդիկս փախոյց, և նշան կանգ-

նեաց, և դարձաւ 'ի Հայս։ Ապա եկեալ Անակ 'ի Պալխայ՝ որպէս թէ անտի փախուցեալ, նենգութեամբ բարեկամ եղև Խոսրովու, որ էր ազգական նմին։ Նա և պաշտեալ 'ի յորս երեք ամաց սպան զԽոսրով. և մնացին Հայք անիշխան ամս Ի.Զ.։

Տրդատ՝ որդի Խոսրովու՝ ամս Ծ.Զ.։ Սա ի ԺԵ ամի թագաւորութեան իւրոյ նահատակեաց զՀռիփսիմեանսն՝ զճգնազգեաց սուրբ Կուսանսն. և Աստուածային նշանք եղեն՝ 'ի ձեռն սրբոյն Գրիգորի։ Սա իբրև ել 'ի բանտէ Վիրապին, սկիզբն արար քարոզութեան, և լուսաւոր վարդապետութեամբ լուսաւորեաց զաշխարհըս մեր. և բժշկեաց զՏրդատ և զիշխանսըն. և մկրտելով զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, եած զնոսա 'ի սուրբ հաւատս Քրիստոսի։ Նա և 'ի ցուցմանէ Աստուծոյ՝ ետ շինել զսուրբ Կաթուղիկէն Էջմիածին և զայլ վկայարանըս, զորս հիմնարկեալ շինեցին Թագա-

ւորն և հաւատացեալ ժողովուրդն. և շատ քաջութիւն և առաքինութիւն եցոյց մեծազօր Թագաւորն Տրդատ ՚ի Հայաստան և ՚ի Հռոմ. մինչ գնաց ՚ի Հըռոմ առ Կայսրն Կոստանդիանոս, և դաշնադրութեամբ հաստատեցին ընդ՝ սէր մեծ ՚ի մէջ իւրեանց՝ յորդորմամբ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սեղբեստրոսի, որ և գրեալ կայ խնդրողացն գիւտ. և մեծաւ շքեղութեամբ դարձան ՚ի Հայաստան՝ Տրդատ և սուրբն Գրիգոր: Նա իշխանքն Հայոց դեղամահ արարին զՏրդատ, և խաւարեցուցին զարեգակն իւրեանց:

Խոսրով՝ որդի Տրդատայ. սա փոքր հասակաւ ո՛չ նմանեալ հօրն, այլ և չունէր զքաջութիւն և զբարի յիշատակս՝ արժանի գրելոյ: Սակայն զխաղաղութիւն արար ընդ արքային Պարսից Շապհոյ՝ թագաւորեաց ամս Թ.:

Տիրան՝ որդի Խոսրովու՝ ամս ԺԳ.: Սա զքաջութիւն ինչ ոչ ցուցեալ, ՚ի

բարեպաշտութեանց թուլացեալ, և 'ի Յուլիանոսէ ուրացողէն երկնչեալ՝ զպիղծ պատկեր նորա 'ի տաճարին կանգնեցոյց։ Զոր տեսեալ Յուսիկ՝ թոռն սրբոյն Գրիգորի, ընկէց յերկիր և խորտակեաց ոտիւք։ Իսկ զայրացեալ Տիրան՝ սպան զՅուսիկ և զԴանիէլ քահանայ։ Սա շինեաց արքունիս 'ի Գօլին։ Իսկ Շապուհ կալաւ զՏիրան և կուրացոյց զաչս նորա, և անդ մեռաւ։

Արշակ՝ որդի Տիրանայ՝ ամս Լ։ Իսկ վասն ապստամբից և անիրաւաց՝ քաղաք շինեալ, և վասն սպանման Գնելայ՝ եղբօրորդւոյ իւրոյ՝ և առնլոյ զփառանձեմ՝ կին նորա, անիծաւ 'ի սրբոյն Ներսիսէ։ Իսկ եղև պատերազմ և Պարսիկք գերի կալան զնա, և ինքն զինքն սպան ի Խուժաստան։

Պապ՝ որդի Արշակայ՝ ամս Է։ Ի սորա աւուրս Հայք պատերազմեալ ընդ Պար-

մինս, յաղթեցին նոցա՝ աղօթիւք սրբոյն Ներսիսի։ Բայց վասն զաղրագործութեանն իւրոյ՝ Պապ յանդիմանեցաւ ՚ի սրբոյն Ներսիսէ. վասնորոյ դժուարեալ ընդ այն Պապ՝ մահադեղօք սպան զսուրբն Ներսէս, և անիծաւ ՚ի նմանէ։ Իսկ Կայսրն Թէոդոս՝ էած զՊապ ՚ի Կոստանդնուպօլիս և սպան զնա։

Վ՛արազդատ ամս Դ։ Սա մեծահասակ, սրտեայ, և ուժեղ և կորովի նետաձգութեամբ ամենեւիմբ նմանեալ քաջին Տրդատայ. զառիւծուն սպան, և նետով միով զԺԻ. թշնամիս հարեալ՝ վերուստ ՚ի վայր հոսեաց զկնի միմեանց։ Սա զկնի աւազակաց վարեաց ընդ նեղուցս Եփրատայ ԻԲ․ կանգնոց չափու. յորմէ զարհուրեալ աւազակքն զէնընկէց լինելով ՚ի ձեռս եկին նորին։ Վ՛ասնորոյ արգեալ ՚ի մանկութեանն քաջութեան իւրոյ՝ ոչ հնազանդէր խրատու վերակացուաց, այլ կամեցաւ զաշխարհս մեր տալ Պարսից՝

թէ տացէ Շապուհ զդուստրն իւր 'ի կնութեան։ Լուեալ զայս բան կայսրն Թէոդոս, կալաւ զնա և ոչ եհան յերեսս իւր, այլ առաքեաց երկաթի կապանօք յաքսորս 'ի կղզի մի յԱփկլիանոս ծովու, և մեռաւ անդ։

Արշակ և Վաղարշակ՝ որդիք Պապայ՝ թագաւորեցին ամս Ե։ Որոց մինն՝ հնազանդեցաւ Կայսերն Յունաց, և միւսն՝ Շապհոյ Պարսից Արքային։

Խոսրով՝ ամս Ե. և 'ի պատերազմին կալան Պարսիկք և եղին յարգելանս։

Վռամշապուհ եղբայր Խոսրովու՝ հրամանաւ Շապհոյ Պարսկի եկաց ամս ԻԱ։ Յազկերտ արքայ Պարսից՝ առաքեաց զորդի իւր զՇապուհ լինել թագաւոր Հայոց. որ եկաց ամս չորս։ Նա յետոյ անարգեալ 'ի Հայոց՝ դարձաւ առ հայրն իւր, և եհաս անդ յաւուր մահուան հօրն իւրոյ Յազ-

կերտի. զոր զՇապուհ եւ սպանին 'ի նոյն աւուր։

Խոսրով՝ դարձեալ ամ մի՝ խնդրուածովք սրբոյն Սահակայ Հայրապետի։

Արտաշէս՝ որդի Վռամշապհոյ՝ եկաց ամս Զ։ Զսա (փառն) բղջախոհութեան իւրոյ առեցին իշխանքն Հայոց եւ մատնեցին երկրորդ Վռամայ Պարսից արքային, եւ մնաց անիշխան երկիրս Հայոց՝ ամս Գ։ Եւ զԹոռն սրբոյն Սահակայ զՎարդան եղին Սպարապետ 'ի վերայ աշխարհիս Հայոց՝ ամս ԺԵ։ Եւ բարձաւ թագաւորութիւնն 'ի ցեղէ Արշակունեաց. որք թագաւորեցին ամս ԵՃԺԳ. եւ եղեն այնուհետեւ ընդ ձեռամբ Պարսից հրապաշտից։ Եւ երբեմն Հայք Մարզպանք իշխեցին, որք են Վարդ, Մանգոս եւ Արշամ։

## ԳԱՒԱԶԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՈՐՔ Ի ՀՐԷԻՑ ԽԱՌՆԵԱԼՔ ԸՆԴ ԱԶԳՍ ՀԱՅՈՑ ԵՒ ԿՈՉԵՑԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ.

*Սոքա թագաւորք էին Արշակունեաց թագաւորացն. իսկ ՚ի բառնալ թագաւորացն մերոց զիշխանն մեր՝ որպէս գրեցաք, նախ ընդ ձեռամբ Պարսից՝ Մարզպանք տիրեցին Հայոց. և յետոյ ՚ի Տաճկաց առնուին զիշխանութիւնն՝ հարկս տալով նոցա՝ մինչև ՚ի ժամանակս Սիոն Կաթուղիկոսին: Եւ ապա ՚ի սեռէ Բագարատ իշխանին՝ Աշոտ անուն ոմն՝ առաջին եկաց իշխան Հայոց՝ ամն ՃԻԶ. և տեղաւորեաց զՀայոց իշխանն ՚ի տեղիս իւրեանց՝ որ ՚ի քաղաքն Անի. և զարգացեալ ճոխացան օր ըստ օրէ որդւոց յորդիս կարգաւ այսպէս:*

*Սմբատ առաջին՝ որդի Աշոտոյ՝ եկաց իշխան՝ ամն ԻԲ. ընկալեալ ՚ի հօրէն զհա-*

մարձակութիւնն, և առաւելեալ կարգաւորութեամբ՝ իշխանութեամբ՝ անուամբ և շինուածովք։

Աշոտ երկրորդ՝ որդի Սմբատայ՝ իշխեաց ամս Ի։ Սա կոչեցաւ Մսակեր։ Եւ Խալիֆայն Ճ՛աֆար՝ որ շինօղն էր Պաղտատու, առաքեաց զզօրսն իւր և ետ տանել առ ինքն զԱշոտ։ Եւ շատ հնարիւք և տանջանօք ոչ կարաց ուրացուցանել զնա 'ի հաւատոյն Քրիստոսի. վասնորոյ եբարձ զնա 'ի կենաց՝ վկայական մահուամբ։

Սմբատ երկրորդ՝ որդի Աշոտոյ նահատակին՝ եկաց իշխանաց Իշխան ամս ԻԵ։ Եւ Ճ՛աֆարն երկրորդ՝ որ էր զօրագլուխ, կալաւ զՍմբատ և ստիպէր ուրանալ զՔրիստոս, և տարաւ առ Խալիֆայն։ Եւ անդ եւս իբրև ո՛չ ուրացաւ, յետ բազում դառնագոյն տանջանաց՝ փայտ քերեալ և 'ի նստոյ տեղին սուէպ սուէպ մխէին և հանէին։ Եւ այնպէս խստագոյն տանջանօք

կատարեցաւ և անանց փառացն արժանացաւ, և եդաւ 'ի վկայարանի Դանիէլի մարգարէին, ուր ընկեցեալն էր 'ի գուբն առիւծուց: Առ սա գրեալ էր զմեկնութիւնըն սրբոյ Աւետարանին Յօհաննու՝ Սարկաւագն:

Աշոտ երրորդ՝ որդի Սմբատայ Նահատակին՝ իշխեաց ամս ԻԲ. և վասն առաւել բարի վարուց և աշխարհաշինութեան և խաղաղասիրութեան նորա՝ կայսրն Յունաց մեծն Վասիլ և Խալիֆայն Պաղտատու՝ ուրոյն ուրոյն թագ առաքեցին սմա. և յերկուց թագաւորացն պսակեալ ձոխացաւ, և մեծ նուաճատեօք օծաւ Թագաւոր Հայոց. և հինգ ամ եւս 'ի պսակաւորութեանն կացեալ՝ յանանց թագաւորութիւնն փոխեցաւ:

Սմբատ արքայ երրորդ՝ որդի Աշոտոյ արքայի՝ քան զհայրն իւր շատ ձոխացաւ. զի էր այր գոռոզ և պատերազմող. իշ-

խեաց Աղվանից՝ Վրաց և Պարսից, և հարկըս էառ. որոյ սահման իշխանութեանն ընդարձակեցաւ պատուով ՚ի Խաղթայ մինչև ՚ի Թիֆլիզ, և յԱղուանից մինչ ՚ի ծովն Կազբից, ՚ի Տարօնոյ և ՚ի Վանայ մինչև ՚ի ծովն Կեղանայ: Սա Ժ.Բ. մեծ պարոնք երթայր ՚ի պատերազմ: Կայսրն Յունաց Ռոմանոս՝ թագ առաքեաց սմա: Եւ Խուսուֆ Խալիֆայն՝ որ զօրագլուխ էր, առաքեաց զԱպուսէթ ՚ի Պարս և ՚ի Հայս՝ հարկահան: Եւ ՚ի պահանջել զհարկն, Սմբատ յաղթեալ հալածեաց զԱպուսաթ զառաջինն: Եւ քուերորդի Սմբատայ՝ Գագիկ՝ որ նստէր իշխան ՚ի Վան՝ հակառակ Սմբատայ, թագ եդ ՚ի գլուխ իւր՝ օգնականութեամբ Պարսից. և զեղբայր իւր զԳուրդ առաքեաց Պարսից Շահին, որ միաբանութեամբ եկին ՚ի վերայ Սմբատայ և յաղթեցան: Եւ վասն Երնձակաց խռովութեանն՝ դարձեալ զօրաժողով եղեն Պարսիկք և Վանեցիք, և եկին ՚ի վերայ Սմբատայ: Եւ իշխանքն Հայոց նենգեցին

Սմբատայ, և հարկեալ յուղարկեցին առ Յուսուփ Շահն։ Որ և կախեաց զՍմբատ զփայտէ։ Եւ արիւն նորա՝ որ կաթէր 'ի մարմնոյն, (տայ) բժշկութիւն.(և իշխեաց) ամս ԻԴ. և մնացին Հայք այնուհետև անիշխան ամս Է։

Աշոտ չորրորդ՝ որդի Սմբատայ նահատակի՝ որ կոչեցաւ Երկաթ, իշխեաց ամս Ը․ հրամանաւ Ռոմանոսի կայսեր Հռոմայ, որ թագ յուղարկեաց սմա։

Աբաս՝ որդի Սմբատայ նահատակի՝ եղբայր Աշոտոյ՝ եկաց իշխան ամս ԻԴ։ Սա շինեաց զԱստուածաբնակ տաճարն զկաթուղիկէն 'ի Կարս՝ հրաշազան յօրինուածովք։ Արար խաղաղութիւն աշխարհիս Հայոց. զի եբարձ զեռոզաբար զաւազակսն, և հաստատեցան ուխտք սրբութեանց՝ Մարմնջաձոր և Կապուտքար յԱրշակունիս, և հռչակաւորն Հոռոմոսին և Դպրեվանք 'ի Շիրակ։

Աշոտ հինգերորդ՝ որդի Աբասայ՝ որ Ողորմածն կոչեցաւ և Շահի-Արմէն, իշխեաց ամս ԻԵ։ Սա հաստատեաց զԽաչիկ Կաթուղիկոսն յընդհանուրս, վանեալ զՎահան և զՍտեփաննոս Կաթուղիկոսունս, որ զմիջոց աշխարհս յցեալ էին նզովիւք։ Թագուհին սորա շինեաց զՀաղբատ և զՍանահին զհռչակաւոր վանորայսն ՚ի թվին Գ·Ճ՛Ժ·։

Սմբատ չորրորդ՝ որդի Աշոտոյ՝ որ Շահըն-Շահի-Արմէն կոչեցաւ, իշխեաց ամս ԺԳ։ Սա ՚ի Թագաւորելն վերարկեաց պարսպի Անւոյքաղաքին՝ բարձրաբերձ բըրգունս ընդնատարած աղխիւք յԱխուրեան գետոյն մինչև ՚ի Ծաղկաձորն կոչեցեալ վայրք։ Սա հիմնարկեաց զպայծառ Կաթուղիկէն։ Բայց մահ հասեալ նմա, ոչ կարաց կատարել զնա. զոր Թագուհին նորա Կատրամիդէ աւարտեաց զնոյն։

Գագիկ՝ եղբայր Սմբատայ՝ որ կոչեցաւ Շահն-շահ, իշխեաց ամս ԻԹ.: Սա շինեաց զսուրբն Գրիգոր գերահռչակ 'ի վերայ Ծաղկոցաց ձորոյն՝ նման սուրբ Էջմիածնի:

Սմբատ երրորդ՝ և Յօհաննէս՝ որդի Գագկայ՝ իշխեաց ամս Ի: Առ սովաւ Յօհաննէս Կոզեռն մեկնեաց իշխանացն զարձակումն սատանայի ընդ մեծամեծ նշանացն՝ որ եղեն 'ի Ռ. ամի՝ լցեալ 'ի ծննդենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Գագիկ՝ որդի Աշոտոյ պարոնի՝ որդւոյ Գագկայ Շահն-շահի. սա կոչեցաւ Իմաստասէր՝ ոչ զփոյթ ունելով զաշխարհակալութենէ: Իսկ իշխանքն Հայոց՝ Հռօմայ Թագաւորին պատգամ յուղարկեցին, թէ՝ եկեալ առցես զերկիր մեր, և ոմանք 'ի Պաղտատ առ տաճիկս առաքեցին զայն բանս. յորում ժամանակի էր Ալփ-Ասլան խալիֆայն, որ եկեալ յերկիրս Հա-

յոյ՝ պաշարեաց զարքայանիստ քաղաքն Ընի յաւուրս ԽԵ. զոր էառ և կոտորեաց։ Եւ Գագիկ փախեաւ Գ.Ճ. արամբք 'ի Կոստանդնուպօլիս առ կայսրն Յունաց։ Եւ եղև անդ տրամաբանել Յունաց ընդ նմա, և յոյժ հռչակեցաւ իմաստութիւն նորա։ Եւ յետ դարձին՝ 'ի հասանիլն 'ի Կեսարիա, զՄետրապօլիտն Յունաց Մարկոս սպան ընդ շան նորա արարեալ 'ի քրձի. որ զանուն շանն Արմէն էր եդեալ։ Եւ 'ի Կեսարիայ յորսս և 'ի զբօսանըս լինելով, յաւուր միում իշխանք իւր ցրուեալ էին ընդ դաշտաւն, և Գագիկ յորսոյ խոնջեալ և արբեալ՝ քնէր ընդ ծառով միով մանկամբ իւրով. և Յոյնք 'ի վաղուց դարանակալ եղեալ սպանէին նմա. զոր անդ որսացեալ սպանին 'ի Ը.ԽԵ. թվին։ Որով սպառեցաւ գաւազան իշխանութեան մերոյ 'ի ցեղէն Բագրատունեաց. որք իշխեցին յորդւոց յորդիս ամս Յ։ Որ յայլ և այլ պատմութեանց ճշգրտեցաւ այսքան կարճառօտ։

Նու մանուկն՝ որ ընդ Գագկի Թագաւորին կայր, փախեաւ անդէն և փոխեաւ ՚ի ձեռա-ցըն Յունաց, և այն է Ռուբէն, որ յետոյ ՚ի Կիլիկիոյ իշխեաց, զոր ՚ի չորրորդ հատո-րի գաւազանագրոցս՝ զնա սկիզըն եդաք իշխանացն Կիւլիկեցւոց. որք Ռուբինեանք կոչեցան։

---

ԳԱՒԱԶԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՎԵՐՋ-ՆՈՑ ՌՈՒԲԻՆԵԱՆՔ ԿՈՉԵՑԵԼՈՑ, ՈՐՔ ԹԱ-ԳԱՒՈՐԵՑԻՆ Ի ԿԻԼԻԿԻԱՅ, ՍԿԶԲՆԱՒՈՐ-ԵԱԼՔ Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ ՇԻԵ, ԵՒ ԻՇԽԵԱԼՔ ՄԻՆՉ Ի ՊԽ. ԹԻՒՆ։

Ռուբէն՝ ազգական Գագկայ՝ յետ սպանման Գագկայ՝ մինչ զօրգացաւ, ժողովեաց զզօրս և եկեալ ՚ի սահմանս Կի-լիկիոյ՝ էառ զԿալայն*) Կոսիտ։ Սա տիրե-լով երկրին, և հասեալ ՚ի գիւղն Կորմա-

(*) Եթէ չէ վրիպակ փոխանակ գրելոյ [illegible], բառս այս [illegible] կամ [illegible] Թարգմանի [illegible]. [illegible]

ըղոյ՝ վախճանեցաւ կացեալ յիշխանութեան ամս Ի։ Ի ժամանակս այս ազգն Ֆռանկաց եկեալ ծովով ելին 'ի Յոպպէ և առին զԵրուսաղէմ՝ իշխելով ամս Գ Ե։ Եւ յետոյ 'ի ժամանակս Սալահատինի կրկին առին զԵրուսաղէմ՝ ազգն Արապկաց՝ 'ի թուին փրկչին ՌՃՁԷ։

Կոստանդին՝ որդի Ռուբինի՝ կալաւ զաթոռ հօրն իւրոյ Ռուբինի։ Որ և (սակս) քաջ և արդարագործ գոլոյն՝ սիրեցաւ 'ի Կուարացւոցն. տիրելով 'ի վերայ ազգին մասին Հայոց՝ էառ զՎահկայն և այլ կլայս ամենս ընդարձակելով զերկիրն իւր 'ի չորս կողմանս՝ տիրելով մինչև 'ի Ծովեզերս։ Եւ յԱնտիոք նստեալ Կոմնէն զքաջութիւնս յոլովս եցոյց, զոր վասն արիական գործոյն կամ անուանեցին Մարդիզ։ Որ եկաց 'ի Կիլիկիայ ամս Ե. և վախճանեաց 'ի ՇԽԹ. թվին՝ թողլով Բ. որդիս՝ զԹորոս և զԼևոն։

Թորոս՝ որդի Կոստանդնի՝ բարեպաշտ և ողորմած, օրինապահ և փիլիսոփայ, էառ զվրէժս 'ի Յունաց սպանողաց զԹագաւորին Գագկի. եկեղեցիս՝ վանօրայս և հիւրանոցս շինեաց, և ոսկիս առատացոյց: Նաև և ամրոցս Փռանկաց և Յունաց, և կոչեցաւ Պրոտոս Սեբաստոս: Կուարացիք զՅունաց Կիւլիկէն 'ի բաց թողեալ՝ Թորոսի երկիր անուանէին: Նա կացեալ յիշխանութեան ամս ԻԳ. վախճանեցաւ, որդի մի մնացեալ սորա, զոր նախանձու աղագաւ անյայտ արարին:

Լևոն՝ որդի Կոստանդնի և եղբայր Թորոսի՝ էառ զԹարսոս և զՄամեստիա նահանգին. 'ի մտանելն սորա զօրօքն 'ի ճակատ պատերազմին՝ բրինձփէքն Փռանկաց զովեցին զսա՝ քաջ կոչելով: Սա իշխեաց ամս ԺԱ. իսկ Կայսրն Յունաց Ռեբբերոժէն ընդ Էհմէտ ամիրային եկեալ 'ի Սիս՝ կալան նենգիւ զԼևոն՝ Թո-

բոս և Ռուբէն Բ. որդւովքն, և տարան 'ի Կոստանդնուպօլիս: Եւ վասն քաջութեանն Ռուբենի զաչսն կուրացուցին: Եւ Լեւոն յարգելանս վախճանեցաւ: Եւ յետ Ե. ամաց՝ իշխանքն Հայոց դեսպանըս առաքեալ առ Թագաւորն Յունաց՝ խնդրեցին զԹորոս և ետ նոցա:

Թորոս՝ որդի Լեւոնի՝ եկն 'ի Կոստանդնուպօլսէ, և նորոգեաց զիշխանութիւնն Հայոց: Սա յաւելու իշխանութեամբ Տարսոնի՝ Մասիսոյ՝ Փոիգիոյ 'և Անարզաբայի և Սաւրիոյ կողմանցն. զոր էառ 'ի Յունաց: Եւ լուեալ Կայսրն Յունաց Մանուէլ, զԱնդրոնիկէ զօրագլուխն իւր առաքեաց ծանր զօրօք 'ի վերայ Թորոսին: Իսկ Թորոս եկեալ ընդ առաջ նոցա՝ կոտորեաց զՅոյնսն. և առեալ զկազմուած բանակին՝ դառնայր արիական անուամբ: Եւ զգերիսն 'ի պատուաւորացն 'ի վաճառ յուղարկէր 'ի բանակն, և զգինս նոցունց իւր զօրացն շնոր-

Հեր. և Յոյնք տեսեալ դարձան ամօթով։ Իսկ լուեալ Թագաւորն Յունաց և դըրգեալ զՍուլթանն Գօնիայու զԳըլըճ-Ասլանն, եկին ՚ի վերայ Թորոսին, պաշարելով զնա ՚ի Բարձրկլայն. որք պարտեցան ձանձրիւ և մեխաւ, և դարձան յետս։ Իսկ Թորոս ելեալ ՚ի կլայէն զօրօքն՝ գնաց և գերեաց զերկիրն Գօնիայու՝ զմարդ և զանասուն, և բազում աւարաւ դարձաւ յետս։ Իսկ լուեալ Գըլըճ-Ասլանն՝ դաշինս եդ ընդ Թորոսին. և գնաց ՚ի Գօնիա։ Էր սա հանճարեղ՝ ողորմած՝ բարեմիտ և փիլիսոփայ. և իշխեաց ամս Ժ.Գ.։

Մլեհ եղբայր Թորոսի՝ ՚ի մեռանելն Թորոսի՝ մնաց նորա որդի մի փոքր՝ Ռուբէն անուն։ Իսկ աներն Թորոսի՝ Թումաս պարոն իշխեաց ամ մի։ Իսկ եղբայր Թորոսի՝ Մլեհ որ վասն չարութեան իւրոյ գնացեալ էր առ Նուրատին Սուլթանն Բերիոյ, առեալ զօրս ՚ի

նմանէ եկն 'ի Սիս: Եւ տեսեալ իշխան-
քըն Հայոց, թէ՝ պատճառ լինի խռո-
վութեան, երդմնեցուցեալ զնա, զի մնա-
ասցէ մանկանն, եղին զինքն 'ի գահ:
Թումաս փախեաւ յԱնտիոք. և զորդի
Թորոսին սպանին չարաբարոյք ոմանք:
Իսկ Մլեհն խստասիրտ իշխեաց ամս Ե.
և սպանաւ 'ի զօրաց իւրոց: Եւ 'ի մեծ
Վանքն՝ զոր շինեալ էր յանուն Վիմին,
անդր թաղեցին զնա:

Ռուբէն՝ որդի Ստեփան պարոնի՝ եղ-
բայր քաջին Թորոսի: Սա բարեգործ և
աստուածասէր. զոր պատուեալ Հոռոմայե-
ցիք՝ կին ետուն սմա յազգէն Իմփերա-
թօրի. իշխեաց ամս ԺԲ:

Լեւոն՝ որդի Ստեփան պարոնի՝ եղ-
բօր Թորոսի և Մլեհի՝ և եղբայր Ռու-
բենի, բերեալ 'ի Տարսոնէ՝ եղին Թա-
գաւոր: Սա տիրեաց ազգին Իսմայելի,
Բուսթէմի և Սալըիոյ, Իբէկիլոյ, Անտի-

ւքու, փայատու, մինչև ցԱստնիլ. զըն-
կաց ՚ի Յունաց Պարսկաց զըկրգս և
զամբոցս. չինեաց վանորայս՝ աղքատա-
նոցս, և ոտծ՛իկս առատացոյց ոսկւ։ Նաւ
կերտեաց զԷջմիածին զԿաթուղիկէն ՚ի
Ախս։ Իմիէրաթօրն Փռանկաց և Կայսրն
Յունաց թագ առաքեցին սմա. Ա՛ա-
կունդին Երբնօպիսկոպոսն եկն ՚ի Պա-
պէն՝ Հրամանաւ արքային Փռանգիոյ՝
Լեգիպտոսէ, և օծին զնա՝ Երքայ։ Նա
լուեալ արքայն Կիպրոսի՝ զքոյրն իւր Ասպա-
սէլ ՚ի կնութիւնն ետ սմա։ Նա Կայ-
սերքն՝ ըստ անուանն՝ առիւծ արմա*)
առաքեցին սմա. զոր բարձեալ ՚ի վերայ
դրօշի իւրոյ՝ առաջի իւր՝ ընթանայր։ Նա
այս նշան դրօշի սեփականեալ մնաց ՚ի
Հայս՝ մինչ ՚ի սպառել թագաւորու-
թեանս Կիլիկեցւոց։ Իսկ առաջին թա-
գաւորքն Հայոց՝ որ ՚ի Հիւսիս, զԱրծիւ-
նոյն կրէին։ Կալաւ զաւով զԱնտիոք,

---

*) Նշան. կնիք.

և զՊէմունդ Ըռինձն արգել 'ի բերդն Սսոյ, և 'ի տեղի նորա կացոյց Ըռինձ Անտիոքու՝ զՌուբէն թոռն եղբօր իւրոյ։ Սա բարեբարոյ և ողորմած կացեալ յիշխանութեան ամս Լ.Զ.։ Եւ բազում դրուատեօք գովեալ վախճանեցաւ 'ի ՈԿԸ. թուին։

Փիլիպ՝ փեսայ Լեւոնի և որդի Ըռինձին Անտիոքու. քանզի Լեւոնի որդի ոչ գոյր՝ զսա եղին թագաւոր գրաւեալ երդմամբ, զի պահեսցէ զօրէնս Հայոց։ Եւ ընդ ակամբ հայելին նորա առ իշխանսն Հայոց, կալան զնա և եղին յարգելանս, և սպանաւ 'ի զօրաց իւրոց. իշխեաց ամս Գ.։

Հեթում՝ որդի Կոստանդին Պարոնի և ազգական Լեւոնի՝ էառ զԶաբել դուստրն Լեւոնի, որ էր կին Փիլիպին։ Զսա օծին թագաւոր Հայոց։ Էառ զՄարաշ և զՊէհնի. շինեաց զԿաթուղիկէն սուրբ

Յոփի 'ի Սիս։ Գնաց առ Թաթարն՝ ուխտ սիրոյ եդեալ ընդ նմա 'ի խաղաղութիւն։ Նոյն լուեալ Պնտուխտար Սուլթանն Մսրայ՝ եկն 'ի Սիս, և ի մարտին անկաւ որդին Հեթմոյ Թորոս, և զԼևոն գերի տարան։ Նոյն Հեթում դեսպան առաքեալ ընծայիւք առ Սուլթանն, արձակեցին պատուով զԼևոն։ Նոյն նորէն Հեթում իշխեալ ամս ԽԴ. հրաժարեալ յաշխարհէ կրօնաւորեցաւ՝ յանձնելով զթագաւորութիւն իւր Լևոնի որդւոյ իւրոյ։

Լևոն՝ որդի Հեթմոյ. սա գրասէր կոչեցաւ. հաստատեալ դպրոցս և դասատունըս՝ ստացաւ գրչարկս. յաղթեաց հաճարուն Արապին, Բրդին, Թուրքմանին և Մսրցւոյն։ Նոյն յաւել ուխտ սիրոյ ընդ Թաթարս։ Ի պարտեզս և 'ի ծաղկոցս զբօսնեալ ընթերցմամբ գրոց շատանայր, կացեալ յիշխանութեան ամս ԺԵ։ Նա ողորմած և խնամածու ազգիս, քաջ և

ալի բարերարութեամբ հռչակեալ համ-բաւիւ:

Զեթում՝ որդի Լևոնի՝ գնաց ի պատերազմ ընդ Թաթարսն, և առին զԲերիա և զԴամասկոս, որք մեծ պատերազմ եղև: Եւ յերկրորդում ամին, ԺԲ. հազարաւ յաջ թևս պատերազմին լեալ՝ ընտրեաց երիս հազարս. և Մըսրցիքն Զ. հազարաւ ճակատեցան ընդ միլեանս Մըսրցոցն. Եւ Ճ՛Ռ.աւ ապատեաց Զայոց քան այր մեռան: Եւ ի փախուստն Սուլթանին անհօղացան Թաթարքն: Իսկ Զեթում Դ.Ռ.աւ զհետ անկեալ փոխ առ փոխ 'ի հանգըրվանս իջանէին մինչ մօտ ի Մըսր: Եւ երկնչեալ Զեթում՝ գուցէ պարտիցի, և ասէ, շատ է ինձ այս զօրութիւնս, զի նախնիքն իմ զայս յաղթութիւնս ոչ արարին: Եւ ի տեղին զմեծ ծառսն սօսի թրով նշանս արար, և 'ի բարձուրս դրացն՝ գիրս գրեաց այսպէս. Զեթում

Թագաւոր Սոսյ՝ մինչ յայս վայր փախոյց զՄըսրցին։ Եւ ի դարձին գայ յԵրուսաղէմ, Ժ.Ե. աւուրբ կացեալ մեծ տօնախմբութեամբ անդ։ Եւ դատաւորք Երուսաղեմի փախուստ առնէին։ Եւ եհաս հրաման խաղաղական ՚ի Խանէն՝ թէ Երուսաղէմ շրջագայիւքն՝ իւրն լիցի։ Եւ Հեթում՝ որ կամելով զԽ. իջեանն՝ Ժ. աւուրբք վերադառնայր։ Իշխեաց ամս Օ. և ապա կրօնաւորեալ Մակար կոչեցաւ։ Աշրաֆ Սուլթանն Մըսրայ եկն ՚ի վերայ Հռոմկլայի, և քեռին Հեթմոյ՝ եկ ընդ դէմ։ Յետ քանի ամաց խաբերոյն՝ բաբանիւ կործանեաց զպարիսպն և էառ զկլայն։ Այս կլայս՝ աթոռ Կաթողիկոսութեան էր, և զՏէր Յոհաննես կաթողիկոսն գերի տարան Ի Մ. արամբք։ Եւ եղև մահ սատակի ՚ի Մըսր՝ մինչև ազատեցին զգերիսն՝ Տէր Յոհաննես Կաթողիկոսիւն, տալով նմա պաշարս ճանապարհի։ Այս Հեթում ունէր Ե. եղբարս՝ այսինքն՝ Թորոս, Սմբատ, Կոստան-

դին, Օշին, և այլ և երիս քորս՝ Երլուն, Ռիթա և Թէֆանո։

Թորոս՝ որդի Հեթմոյ՝ եղբայր Լեւոնի եկաց Ի. ամ։ Սա յառաջ առեալ էր զքոյր (արքային) Կիպրոսի, և յետոյ կրօնաւորեցաւ, և Լեւոն ընկալաւ զթագն 'ի Թորոս եղբօրէն. և զքոյր իւր զԵրլուն խաթուն ետ Կիպրոսի թագաւորին Եմարինի։ Եւ յորժամ Եմարին եկն 'ի Կիպրոսէ թագուհեաւն հարսանիս առնել, յայնժամ իշխանքն Հայոց բռնութեամբ կրկին զՀեթում եդին թագաւոր։ Եւ զմիւս քոյրն իւրեանց Ռիթա խաթունն ետուն կայսերն Յունաց Մանուէլի 'ի թագուհիութիւն։ Եւ զԹէֆանո խաթուն տարեալ առ կայսրն, զի որում և կամիցի՝ տացէ։ Եւ յորժամ եկին 'ի կայսրէ առնուլ զՌիթա, կրկին էջ յաթոռոյն Հեթում և յանձնեաց զիշխանութիւնն՝ Թորոսի. իսկ Թորոս և Հեթում ետուն զթագն եղբօրն

իւրեանց Ամրատայ, և ինքեանք գնացին 'ի Կոստանդնուպօլիս։ Սա իշխեաց ամս Գ.։

Ամրատ՝ որդի Լևոնի՝ եղբայր Հեթմոյ և Թորոսի՝ խեռլռ ընկալաւ զԹագն յեղբօրէն. և Թորոս և Հեթում դարձան 'ի Սիս՝ ձեռնտուութեամբ Թաթարաց՝ զԱմրատ ընկենուլ, և ինքեանք նստիլ։ Իսկ մինչ յայս խորհրդեան կային Թորոս և Հեթում, լուեալ Ամրատ ըմբռնեաց զնոսա և եդ 'ի բանտի՝ ուրոյն։ Իսկ կամակցութեամբ իշխանացն՝ զԹորոս խեղդեաց և զՀեթում կուրացոյց. որ իշխեաց ամս Գ.։

Կոստանդին՝ որդի Լևոնի՝ եղբայր Թորոսի՝ Հեթմոյ և Ամրատայ, եկեալ 'ի վերայ Սոյ, և եկեալ զօրքն Հայոց 'ի դաշտն՝ պատերազմեցան ազգայինք ընդ ազգայինս, եղբայր ընդ եղբօր. և սուր քարշեալ ընդ դէմ իրերաց՝ յառաւօտին՝

ո՛չ ճանաչելով զմիմեանս, բազումք մե-ռան. և ըմբռնեալ զՍմբատ եդ յար-գելանս, և գտեալ զՀեթում առողջա-ցոյց զմի ակն. կալաւ զիշխանութիւնն և իշխեաց ամ մի։ Նա զրգեալ զօրքն Հայոց զՀեթում, աքսորեցին զԿոս-տանդին, և ինքն կալաւ զիշխանութիւ-նըն։ Սորա իշխանութիւնն յետ և յա-ռաջ Ն. ամ։

Լեւոն՝ որդի Թորոսի՝ իշխեաց ամս Գ։ Թաթար Միրզէն Պիլարղուն ա-նուն, նենգիւ ըմբռնեալ սպան զնա։ Նա եղբայրն Հեթմոյ՝ գնաց առ Թաթար խանն ՚ի գանկատ։ Նա մարդ ուղարկեալ պատժեաց շուտով զՊիլարղուն, և սպան զնա։

Օշին Ծիրանածին՝ որդի Լեւոնի գրա-սիրի՝ փոքր եղբայրն Հեթմոյ, իշխեաց ամս ԺԳ։

Լէոն մանուկ՝ որդի Օշնայ՝ իշխեաց ամս ԻԵ։ Յամի տեառն ՌՃԼԸ. Թէ-մուրատ Թաւթարն եկեալ 'ի Սիս ԼՌ. ձիաւորօք և երեք դաս հետեւակօք, զոմանս կոտորեաց, և զոմանս գերի վարեաց։ Նա ջանաց զգուշակս և զելս ինչ առնուլ, և ոչ կարաց. և դարձաւ յետս Ամըրզին՝ ԽՌ. ձիաւորօք, ԽՌ. հետեւակօք, և մեծաւ աշխատանօք եառ զԱյաս և կործանեաց։ Նա լուեալ Պապն Հռոմայ, ԼՌ. ոսկի յուղարկեաց և առատ ընծայք նորոգեաց սփոփելով զՀայս։ Նա յետ Փ.Օ. ամի կրկին եկեալ Ամըրզին եառ զԱյաս։

Կոստանդին՝ ազգական Լէոն Թագաւորի՝ որդի Պաղտին մարաջախտի՝ իշխեաց ամս Ի։

Ջիւան՝ հօրքվերորդի Լէոնի. սա Պայլ կոչեցաւ. իշխեաց ամ մի։

Կին՝ հօրքեռորդի Լեւոնի և եղբայր Ճիւանի՝ իշխեաց երկու ամ: Սո-քա եղբարք ազգակիցք գոլով Փռանկաց, Հայք սպանին զնոսա:

Լեւոն իբր թագաւոր նստեալ ԺԸ. ամիս, և լուեալ Սուլթանն Մըսրայ՝ եկն բազում զօրօք, և ըմբռնեալ զԼեւոն՝ Մարիւն թագուհեաւն, և տարաւ 'ի Մըսր և կորոյս զԼեւոն. զվանորայս, զեկե-ղեցիս, զհիւրանոցս և զմեծամեծ շէն-ուածս կործանեաց: Իսկ 'ի պալատս թա-գաւորաց եղեալ զտպանակին լի ոսկով և զայլ կահս ոսկեղէնս և արծաթեղէ-նըս տար առին: Զշիրիմս թագաւորաց բացին, և զոսկերսն այրեցին, և զՍիս 'ի հիմանցն տապալեցին. և բարձաւ թա-գաւորութիւնն 'ի տանէն Կիլիկեցւոց 'ի ՊԻԴ. թուին:

Կատարումն աստ գաւառանի ազգարա-նութեան թագաւորացն Հայոց, համա-

ոստ ծաղկաքաղ առարեալ և 'ի բուն պատմութեանցն հանեալ ։

## ԿԱՐԳ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՅՍԵՐԱՑՆ ՀՌՈՄԱՅԵՑԻՈՑ.

Այսոքիկ են Կայսերք Հռոմայեցւոց, զոր կամեցայ ժողովել մի գրի միայն պատմելով զամփաւս 'ի բազմաց՝ զգործս նոցա, մանաւանդ զմեծամեծս անցից նոցին և արարմանց համառօտապէս և սուղ ասութեամբ սկսեալ յՕգոստոս կայսերէ. յորում ժամանակի ծնաւ Քրիստոս Աստուած մեր 'ի Բեթղեհէմ, դնելով անուն զթիւ փրկչին, և վասն կենաց և մահու նոցա գրելով, զորս 'ի պատմագրացն կարացի գտանել ։

### ԿԱՐԳ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՅՍԵՐԱՑՆ ՀՌՈՄԱՅԵՑՒՈՑ, ՍԿՍԵԱԼ ՅՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍԵՐԷ.

Օգոստոս կայսր թագաւորեաց ամս ԾԶ. սա էր կնամոլ, կեանքն ՀԶ. ամ։ Մեռաւ իւր մահուամբն 'ի Հռոմ։ Սա կամեցաւ Աստուած կոչել զինքն. բայց յանդիմանեցաւ 'ի Սիպիլեայ Մարգարէուհոյն։ Սա տիրեաց բոլոր աշխարհի։ Ի սորին ԽԲ. ամին ծնաւ Քրիստոս Աստուած 'ի Բեթղեհէմ. որ եւես զանձին յայտնի 'ի Պաղեստին. յետ երեք աւուրց պնդութեան պահոց, 'ի կամարն երկնից աղջիկ մի կոյս՝ եւ 'ի գրկին մանուկ նորածին, եւ ելեալ ձայն 'ի կամարէն երկնից, թէ՝ սմա պարտ է երկնի եւ երկրի երկիրպագանել, որ անմահ է, եւ ոչ քեզ՝ որ մահացուդ ես. յաւուրս սորա 'ի պանդոկ վատնողաց՝ աղբիւրն ձէթ բղխեաց յորդ եւ առատ՝ յօր ծնըն-

դեանն Քրիստոսի. որ ցայժմ ջուր բղխէ։ Այս արար աշխարհագիր ընդ ամենայն տեղիս՝ ըստ աւետարանին Ղուկասու։ Նա և էր յոյժ գեղեցիկ անձամբ և երեսօք։

Տիբերիոս Թագաւորեալ ամս ԻԳ. յամի Տեառն ԺԳ։ Էր սա ցածկոտ խիստ. կեանքն ՀԸ. ամ։ Յանկարծամահ մեռաւ 'ի ճանապարհին։ Սա էր փեսայ Օգոստոսի. և էր բարեբախտ և խոհեմ. յաւուրս սորա մկրտեցաւ Յովհաննէս Մկրտիչն գլխատի, և Քրիստոս Աստուած մեր խաչի։ Սա զՊիղատոս սպանանէ, և զՀերովդէս ընդ Հերովդեայ կնոջ խրում տարեալ 'ի Հռոմ՝ յաքսորս առաքէ 'ի Լէօն քաղաք. և ընդ տասակին յետ չարչարանացն Քրիստոսի՝ հինգ ամ (անցեալ)։

Գայիոս՝ եղբօրորդի Տիբերիոսի կայսեր, Թագաւորեաց ամս Գ. ամիս. Ը. յամի տեառն ԼԷ։ Գայիոս՝ որ է Գալլոս

Խոռոզ Թարգմանի, որ է խօսող։ Սա յոյժ փափաշոտ էր, մինչ զի զերկու քորսն 'ի միասին կալու խուրն կին. և այլ մեծ չարիս գործեալ՝ առեալ եղև յամենայն Հռոմայեցւոց. և յարեան 'ի վերայ նորա զօրքն՝ և սպանին զնա 'ի մէջ պալատանն իւրոյ։

Ագօղիոս՝ սկսաւ յամի տեառն Խ. Թագաւորել ամս ԺԳ։ Վասն սորին կնօջն պատմի 'ի Յունաց, թէ՝ Պատրոնիկէ Թագուհին՝ կին էր Ագօղիայ, որ գնաց յԵրուսաղէմ՝ յաւուրս Տեառնընդառաջին, և եգիտ զխաչն Քրիստոսի. որ էր կին մի՝ այլ յոյժ այրամոլ. և վասն այն գործոյն՝ սպան զնա. և էր Ագօղիոս՝ յոյժ որկրամոլ և արբեցող. վասն այն հրաման կարգեաց ամենայն մարդկան՝ անպատկառ և անամօթ ձգատալ և փուք հանել՝ թէ 'ի փողոցս և թէ 'ի սեղանի. քանզի ասեն թէ բազումք մեռան, որք զայս առնել աամաչեցին։ Յաւուրս սորա եղև սով ընդ

ամենայն երկիր. զոր մարգարէացաւ Ագաբոս՝ Գործոց 11. 28: Յայնմ ժամանակի և սուրբ Առաքեալն Պետրոս՝ ՚ի Հռոմ գնաց. և ԻԵ. ամ անդ եկաց:

Ներոն՝ սկսաւ յամի Տեառն ԾԴ. ինքնակալեաց ամս ԺԳ. և ամիս Ը: Սա էր յոյժ պղծասէր և էշխեկայ*): Սա զմի շորն Ի. անգամ ոչ զգեցաւ. և զոտնամանն ՚ի պատուական ականց և մարգարտէ կազմէր. միշտ ՚ի ձկնորսութիւն շրջէր. և ուր նստէր աւաչէր, և ձայնաւորս եղանակէր ՚ի մէջ պատուականաց և նուաստից: Սա առաքեաց զՎեսպիանոս զօրօք ՚ի վերայ Երուսաղէմի: Սա սպան զմայրն իւր, և զկնայրն և զՍենեկա վարդապետն իւր. զի աշակերտեցաւ առաքելոյն: Սա սպան զսուրբ առաքեալսն: Սա շինեաց ապարանս բազմածախս՝ ՚ի յոսկոյ և յարծաթոյ, ՚ի փղոսկրէից և յապանոսից: Սա արար զա-

(*) Զարապործ. անզգամ:

ռաջին հալածումն քրիստոնէից։ Սա մը-տածեաց, թէ՝ եթէ քաղաքս Հռոմ հըր-դեհիւր, որքա՜ն մեծամեծ բոցս արձակէր. և հրամայեաց հուր հարուլ, և երեք օր այրեցաւ։ Եւ նա ելեալ ՚ի բարձր աշտա-րակին՝ ծափս տայր և ծիծաղէր։ Զոր զայ-րացեալ Հռոմայեցւոց՝ դիմեցին ՚ի վերայ նորա, զի կալցին զնա. և նա փախեաւ. և ՚ի թաքչիլն ՚ի պարտիզի միում՝ ինքնզինքն սպան դանակով։ Եւ այլք ասեն՝ թէ պարտիզպանն սպան։ Յաւուրս սորա Թա-գաւորութեան՝ ամենայն Հրեայքն յԵրու-սաղէմ սպանին զՏեառնեղբայրն Յա-կոբոս, որպէս պատմի ՚ի Գործս Ա-ռաքելոցն սրբոց (12. 2)։ Սա հերձեաց՝ ասեն, զարգանդ մօր իւրոյ սուսերով, տեսից՝ թէ յո՞ր տեղի բնակեալ էր Թ. ամիս. որ և ասեն՝ այնու մեռաւ մայրն նորա։ Սա եկուլ զորտ մի էգ և սնոյց զնա կաթամբ ՚ի փորն իւր. և զորտն բազում ժամս ա-ռար. և ըմպեալ շէրպէթ*)՝ զամենն թա-

(*) 1) Օշարակ. 2) դեղ։

փեայ յերկինն կենդանակիրս։ Եւ չքնեաց զՆերոն 'ի Հռոմ՝ բայց 'ի բարձրութիւն Ռ՛Կ. ամենաչափի, որ երեւի մինչ ցայժմ։

Գալբաս սկսաւ յամի տեառն ՀԸ. թագաւորեաց ամիս Է. և աւուրս Ժ։ Էր սա յոյժ խոնարհ. որ և ամենեցուն գիջանէր, և զիւրս արկեալ համբուրէր, և առ իւրն ձգեր. 'ի մէջ Հրապարակին սպանաւ անարի գործով. կեանքն ոչ գոյ յայտնի։

Օթոն թագաւորեաց ամս Գ. ամիս Ե։ Էր սա պատերազմօղ. կեանքն ոչ գոյ յայտնի. խիզախելիքն ազատն 'ի պատերազմի։

Վիտելլիոս սկսաւ յամի տեառն ՀԹ. թագաւորեաց ամիս Ը։ Նա էր բղջախոհ յոյժ։ Զոր լարով խեղդեցին ժողովուրդքն 'ի Հռոմ. վասն զի շռայլէր. կեանքն ոչ գոյ յայտնի։

Վ. եսպասիանոս սկսաւ յամի տեառն ՀԵ: Թագաւորեաց ամս Ժ. և ամիսս Զ: Սա էր այր բարի: Սա ՚ի զօրականութեան իւրում բազում պատերազմունս մղեաց և յաղթե-նոյ ՚ի յաղթող գտաւ, և զանազան զաւառս հնազանդեցոյց Հռոմայեցւոց: Սա առաքեցաւ ի՛ Ներոնէ ՚ի վերայ Հրէաստանի և Պաղեստինոյ առ ՚ի հնազանդեցուցանել զապստամբեալ Հրեայսն, որք հակառակեցան հրամանաց Կայսերական հարկացն: Այլ մինչ էր ՚ի Պաղեստին, պաշարեալ զօրօք զԵրուսաղէմ, անդ ՚ի զօրացն թագաւոր ընտրեալ եղև ելեալ՝ Ներոնի կոչեալ: Սա կալաւ զՏիտոսիոս Հրեայ և պաշեաց ՚ի կապուտս. և ՚նա մարգարէացաւ թէ՝ թագաւորեսցէ ևս Վեսպասիանէ: Եւ իբրև թագաւորեաց, եկն ՚ի Հռոմ. և զՏիտոսիոս արձակեաց և պաշտէր պատուով: Եւ փառացուցանէր մեծաւ ՚ի վերայ ամենայն աւելով, ոչ է պարտ աշխարհի ընկղմանել:

Տիտոս սկսաւ յամի տեառն Ձէ․ ինք-նակալեաց ամս Գ։ Սա որդի էր Վեսպի-անոսի. սա մինչ պաշարեալ ունէր զԵ-րուսաղէմ, Ինքնակալ եղաւ. քանզի լու-ան զմահ հօր նորա զօրքն՝ և թագա-ւորեցուցին զնա։ Սա էր լի ամենայն իմաս-տութեամբ և բարի առաւել քան զհայրն իւր։ Սա իբրև թագաւորեաց, զօրականացն իւրոց պատուիրեաց մի զի ինքնակալեալ է սարսեցին 'ի նմանէ։ Այն սա Տիտոս՝ զԵ-րուսաղէմ՝ զոր հայրն իւր 'ի նեղ արկեալ էր և պաշարեալ, էառ զնա կրակով. քանզի նափանեցին զծայրն ներքին, և կրակեցին և լցին 'ի քաղաքն, որ այրեցաւ։ Նաև քա-կեաց զգանձարն և տարաւ 'ի Հռոմ, ըզ-Հրեայսն բնաջինջ արարեալ անտի։ Սա բազումս աղաչեաց զՀրեայսն՝ Հնազանդել նմա, և մնալ աշխարհով և քաղաքով և տաճարաւն՝ յիշխանութեան նորա։ Ամե-նայն պաշարումն՝ թէ՛ Վեսպիանոսի և թէ՛ իւրն․․․․ եկաց ամս ԻԳ։ Սա մեռաւ 'ի չափ այրական, և թաղեցաւ մերձ հօր

խուրում, և կոծ մեծ եղև Հռոմայեցւոցն։

Դոմետիանոս՝ որդի Վեսպիանոսի՝ և եղբայր Տիտոսի, սկսաւ յամի տեառն ՁԹ. ինքնակալեալ ամս ԺԴ.։ Սա ոչինչ գործ բարութեան եբեր յանձն իւր. ոչ զհօրն և ոչ զեղբօրն, և զբազումս սպան ՚ի Սենատորացն և զամենայն ծանօթսն իւր. քանզի գիտէին զայդն և պակասութիւն նորա։ Սա երկրորդ հալածումն արար քրիստոնէից. սա լուաւ զՅովհաննու Աւետարանչէ, և յղեաց յԵփեսոս՝ եբեր զնա և եդ յեռս ձիթոյ. և իբրև եղ անվնաս, աքսորեաց զնա ՚ի Պատմոս։ Սա զինքն կրկին Աստուած կոչել եւս, այսինքն՝ Աստուած Աստուած. սա ետ սպանանել զսուրբն Դիոնէսիոս ընկերօք իւրովք ՚ի Փարէզ քաղաքի. և բազում չարիս գործեաց. զոր տաղտկացեալ Հռոմայեցւոցն՝ սպանին զնա յիւրում պալատին ՚ի ԽԵ. ամի հասակի իւրոյ։

Ներուաս սկսաւ յամի Տեառն ՂԶ։ Թագաւորեաց տարի մի և Դ. ամիս։ Սա՛ զոր ինչ Դոմետիանոս աւարեալ էր և առհմանադրեալ, յետս չրեաց զամենայն։ Սաստի և զսուրբ Աւետարանիչն Յովհաննէս դարձոյց յաքսորանացն Պատմոսի, և տարեաց յԵփեսոս. ուր գրեաց զԱւետարանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Տրայիանոս սկսաւ յամի Տեառն ՂԳ. ինքնակալեալ ամս ԺԹ։ Սա ՚ի հարճէ Սպանիացւոց ծնեալ և յետախոյ իշխանացն Եգիպտեաց և Յունաց ինքնակալ եղեալ։ Սա զկնի Օգոստոսի զիշխանութիւնն Հռոմայ աճեցոյց մինչև ՚ի Բաբելոն և ՚ի Հնդիկս. և ՚ի ծովն Կարմիր նաւս եդ։ Սա մինչ զայր յԵգիպտոսէ յԱնտիոք, կալաւ զԻգնատիոս աստուածազգեացն և եբեր ՚ի Հռոմ։ Եւ սուրբն միշտ յիշէր զանունն Քրիստոսի. և զինւորքն ասեն ցսուրբն. մինչև յե՞րբ յիշես զանունն Քրիստոսի. և նա ասէ, ՚ի վերայ

սրտի խիղճ գրեալ կայ, վասն այն ոչ կա-
րեմ մոռանալ զնա։ Զոր իբրև հանին կեն-
դանւոյն զքերան, անտի գրեալ 'ի նմա ոսկի
գրով զանունն Պերիատոսի. և ապա արկին
զնա առաջի առիւծուց. և իսկոյն հեղ-
ձուցին զնա։ Բնկենոս փիլիսոփայն գրեաց
Տրայիանոսի՝ ոչ նեղել զքրիստոնեայսն։
Զայս Տրայիանոս, պատմէն թէ՝ Գրի-
գորիոս սուրբ Հայրապետն Հռոմայ տես-
եալ զքանչելի գործսն՝ զոր շինեաց Տրա-
յիանոս կամարաձև արքայն զպատմութեան
կամուրջն 'ի վերայ մեծամեծ և անհուն
գետոյն, և զպատարագմապն 'ի ձորս, 'ի
բազմամբոս և 'ի այլմայլ տեղիսն ձևա-
պարհաց, զարմանայր յոյժ Հայրապետն
Գրիգոր, և հայցէր յԱստուծոյ ներումն
Տրայիանոսի. և ասէր թէ՝ տեսանց կա-
մայն Աստուծոյ՝ մարդ այսպիսի անպա-
մելի գործս ոչ կարէ տանել։ Իւր 'ի բա-
զում ժամանակս հայցէր յԱստուծոյ ար-
տասուօք զփրկութիւն Տրայիանոսի. և ե-
կեալ առ նա Հրեշտակ Տեառն՝ ասաց, վա-

որն աղօթից քոց շնորհեաց Աստուած ներումն Տրայիանոսի. այլ վասն կռապաշտ մարդոյ մի՛ աղաչեր զԱստուած, զի այլ ոչ լսէ քեզ։

Անդրիա սկսաւ յամի տեառն ՃԻԲ. թագաւորել ամս ԻԱ։ Սա եղբօրորդի էր Տրայիանոսի, բայց ոչ համեմատ նմին։ Յաւուրս սորա Հրէայքն որ յետ Տիտոսի ժողովեցան յԵրուսաղէմ և դարձեալ ապստամբեցան 'ի Հռոմայեցւոց. և սորա գնացեալ յԵրուսաղէմ՝ կոտորեաց զնոսա, և զմնացեալսն ցրուեաց ընդ ամենայն աշխարհ. և զքաղաքն սուրբ պարսպեաց, որ ի Տիտոսէ աւերեալ էր։ Նա հրամայեաց քրիստոնէից բնակել անդ, և ոչ Հրէից։ Բայց զԳողգոթայն տեղի չարչարանացն Քրիստոսի, որ յառաջ արտաքոյ քաղաքին պարուէզ էր, սա 'ի մէջ քաղաքին էառ որպէս և է այժմ. և կոչեաց զքաղաքն յանուն իւր Ելիուսաղէմ կանուանէր, քանզի և իւր անունն Ելիուս Անդրիանէ

էր. և Նոյնս*) գրեաց ոչ նեղել զքրիստո-նեայսն հաւատացելոցն: Յաւուրս սորա կարգեցան յեկեղեցիս Քրիստոսի ժամ՝ պատարագ՝ պահք և կարգ եկեղեցականք: Սա ջրգողեալ ցաւօք մեռանի:

Անտոնինոս առաջին սկսաւ յամի Տեա-ռն ՃԽԳ. ինքնակալեալ ամս ԻԲ. և ամիս երեք: Կոչեցաւ սա Պիոս՝ որ է գը-թած. և վասն այն՝ կոչեցաւ գթած, զի ոչ դարձոյց զերեսս յամենայն խնդրողաց ինչ ՚ի նմանէ: Սա էր փեսայ Անդրիանոսի կայսեր: Սա հրամայեաց մի՛ նեղել զաշ-խարհ վասն հարկի. այլ չափաւորապէս առնուլ: Սա պարսպեաց զՌոդոս քա-ղաքն՝ զոր յառաջն Կոլոսիս կոչէին՝ որ է պատկեր միաձոյլ. զոր եղեալ էր ՚ի ձե-ռաց Բ. սրբոցն, զոր յետոյ Մաւիին քա-կեաց և երարձ զայն Գ.Ռ. բեռն պղինձ. վասն կառոյն կոչէին զկղզին Կոլոսիս. առ

(*) Օրէնք. Հրաման. Հրովարտակ.

որ Պօղոս գրեաց զԹուղթն Կողոսացւոց. և ուստի Ենգլիանոս գրեալ երեք բանս խրատականս մարդոց, որ է այս. « մարդ որ լինի 'ի ձմերս պարապոր, 'ի կենաս փափուկ, 'ի զգեստս պճնեալ, այնպիսին ոչ գիտէ թէ աշխարհս ի՞նչ է »: Մեռաւ 'ի գեօղն իւր Օրդաւիլ՝ հեռի 'ի Հռոմայ Ժ.Մ. մղ*), և բերեալ թաղեցին զնա 'ի Հռոմ փառօք: Սա որպէս քրիստոնեայ էր, բայց ոչ լինպէս. և ոմանք ասեն թէ գնաց 'ի Պարսս 'ի պատերազմ, և սպանեալ եղեալ մեռաւ և թաղեցաւ 'ի Խասան մերձ յՌուհա:

Մարկոս Ենտոնինոս՝ սկսաւ յամի Տեառն ՃԿԸ. ընդ եղբօր իւրում Օրեղիանոսի թագաւորեաց ամս Ժ.Ը.: Սա յոյժ ունեցեալ կենաս հանդարտ, էր գիտակ յոյժ Յոյն և Լատին իմաստութեանց: Սա պատմած գրեալ ոչ առնոյր

(*) Մղոն. փարասախ.

հարկս յաշխարհէ: Եւ 'ի սատանայութեան պատերազմին, որ շրջակայ իւրն կային, չքաւորեցաւ և զամենայն որ ինչ զաւ 'ի սանձն անօթք, նաև 'ի վերայ թագաւորին, ծախեաց և զօրաց ածիկեա. և յետ յաղթութեանց ոչ ըստ սովորաւ զայն. փառօրոյ կոչեցաւ Աղբամած: Նա Մարկոս բարի գոյով զրգեալ ըսկապատութեամբ յիւրոյն յորոց վերերդ հալածումն քրիստոնէից. որև մարտիրոսացաւ ստրբն Պօղիկարպոս և այլ բազում վկայք: Նա մեռաւ 'ի յԱնեկարից, և բերեալ 'ի Հռոմ թաղեցաւ:

Կոմմոդոս Աւրելիանոս՝ որ է Օրեգեոնոս, եկաւ յամի Տեառն ՃՁԲ. թագաւորեաց ամս ԺԳ. և էր ըղձախոհ: Նա մեռաւ և թաղեցաւ յապարանս իւր 'ի Հռոմ. քանզի զեղ մահու արբուցին նմա, և զտին զնա մեռեալ:

Պերտինաքս սկսաւ յամի Տեառն ՃՂԳ. թագաւորելոց ամիս Գ.: Էր նա արդարադատ. մեռաւ ծերացեալ՝ բայց սպանմամբ, զի ամբոխ քաղաքին կուտեալ 'ի վերայ նորա՝ սպանին զնա:

Սեւերոս սկսաւ յամի Տեառն ՃՂԳ. թագաւորելոց ամս ԺԸ: Էր նա Ափրիկեցի և գիտուն յոյժ: Նա էր յառաջնում ճարտասան դատաստանաց. և մի գլխոյ գինի փոխեալ գործակալութեամբ եւ մինչ ա-կայութեան. և էր պատերազմող: Նա յարոյց զօրաւոր հալածումն 'ի վերայ քրիստոնէից, և մեռաւ մինչ 'ի պատերազմին Անգղիոյ էր:

Անտոնինոս երկրորդ՝ սկսաւ յամի Տեառն ՄԺԲ. թագաւորելոց ամս Է. բղջախոհ և չար յոյժ: Ի ժամանակս սորա զաւեալ եղև յՍերեքոն Ե. դերք, որ ոչ երեւիր՝ թէ ո՞ւմ էր յարմարեալ. սակայն զանազան և պիտանի խոհեմ բանք

կայլն 'ի նոսա: Սա 'ի պատերազմ զը-
նացեալ մեռաւ. մերձ 'ի Սերհա:

Մակրինոս սկսաւ յամի Տեառն ՄԺԷ. ինքնակալեաց ամ մի: Սա անարգի գոլով վասն նախանձու 'ի զօրաց իւրոց գլխատեցաւ. և ոմանք ասեն թէ՝ յորդւոյն իւրմէ, նախանձու սպանաւ:

Անտոնինոս երրորդ՝ սկսաւ յամի Տեառն ՄԺԸ. ինքնակալեաց ամս երեք՝ աղտեղի և զազիր: Խորին ժամանակին յայտնեցաւ Հերձուածողն Սաբելիոս: Սա Անտոնինոս՝ ամբոխմամբ զօրաց իւրոց սպանաւ ընդ մօր իւրոյ:

Աղեքսանդրոս սկսաւ յամի Տեառն ՄԻԳ. ինքնակալեաց ամս ԺԳ. և Օգոստոս կոչեցաւ: Էր սա զգաստաբարոյ յոյժ և հերձուածող. սա զսուրբ պապն զԿալիքսթոս՝ վասն ուղղափառ հաւատոյն՝ սպան: Խորին ժամանակին փայլ

վարդապետն Որոգինէս։ Սա Աղեքսանդրոս սպանաւ ՚ի Մ`աքսիմիանոս անօրէն։

Գրիգորիանոս սկսաւ յամի Տեառն ՄԼԸ. թագաւորելոց ամս Զ։ Գնաց զօրք ՚ի Պարսս. և իբրև յաղթութեամբ դայր, սպանաւ ՚ի Փիլիպպոսէ իշխանէ՝ զաւրով. և ոմանք խեղդեալ՝ ասեն՝ զնո- քըն յԱփրիկէ։ Սա յաղթեաց բազում քաղաքաց և աշխարհաց։

Մ`աքսիմիանոս սկսաւ յամի Տեառն ՄԽԳ. թագաւորելոց ամս Գ. հալա- ծիչ եկեղեցւոյ։ Զսմանէ ասեն՝ Խ. Լիտ- րա*) միս ուտէր և Մարէ**) մի գինի ըմպէր, և Զ. քսեստ քրտունս հանէր ՚ի նմանէ յօրն։ Սա գնացեալ ՚ի վերայ Բոլոնեանց, և իբրև դարձաւ յաղթա- հարութեամբ, սպանաւ ՚ի զօրաց իւրոց

(*) Մի լիտրայն է 152 դրամ.

(**) Մար՝ չափ ինչ գինւոյ

'ի ԲԻԶԱՆԴիոյ քաղաք Եկաւէոյ՝ յերկրա-սարգական հասակի:

Փիլիպպոս առաջին սկսաւ յամի Տեառն ՄԽԶ. ինքնակալել ընդ որդւոյ իւրում Փիլիպպոսի ամս Դ. ամիս Դ: Սա առաջին եղեւ ինքնակալ քրիստոնեայ, մկրտեցաւ 'ի Պետրոսէ Պոնտացւոյ մարտիրոսէ, հաստատեալ 'ի Ֆաբիանոսէ պապէ եւ մկրտել եւ զորդին իւր. եղեն երկոքեին ընտիր քրիստոնեայք: Նա զորդ-ամբ Դեկիոսի՝ որ զկնի սորին սպանին զհայրն 'ի Հռոմ, եւ զորդին 'ի Վերոնա քաղաքի. 'ի սոյն ժամանակս լցաւ հազար ամ շինման Հռոմայ:

Դեկիոս սկսաւ յամի Տեառն ՄԾ. ինքնակալել ամս Դ: Եղգաւ բարբարոս՝ ժանտ եւ ատեցող էր աղքատաց: Սա Զ.-երրորդ հալածումն յարոյց 'ի վերայ քրիստոնէից: Ի ժամանակս սորա բազումք կատարեցան վկայութեամբ: Ի

սմանէ խառմեցաւ սուրբն Ղօրենցիոս. ի սմանէ փակեցան յայրին սուրբ մանկունքն Եփեսոսի։ Սա էր կռապաշտ. սպանաւ 'ի ցեղակցաց իւրոց։

Կայոս սկսաւ յամի Տեառն Մ՟Ձ՟Գ. քահանայեալ ամս Գ. այր չար։ Սա 'ի Կէսմիոյ գաւառն փոքր կալեալ՝ չար մահուամբ մեռաւ։

Մարկեղինոս սկսաւ յամի Տեառն Մ՟Ձ՟Ը. քահանայեաց ընդ Մարէսի ամս ԺԵ։ Սա գնաց յԵրուսաղէմ և յայլ աշխարհ 'ի պատերազմ և 'ի Պարսս, և ընթանեալ սա, Փիլոոս եդ զնա սրբոց տղոց մինչև 'ի մահ։ Ի սմանէ մարտիրոսացան սուրբքն Կիպրիանոս և պապքն Հռոմայ Մարցեղիոս և Նուցիոս։ Իսկ Կապէնոս որդին Մարկեղինոսի քահանայեաց խոկիլըն բարի, և յետոյ եղև չար։

Իւ Օրեգինոս տուէն սպան զնա յար-տաքնոցն՝ Նիզակաւ, և աղէքն հեղեալ սատակեցաւ։ Յայսմ ժամանակի սուրբն Պօղոս առաջին անապատաւորն գնաց յանապատ։

Գուլօտոս երկրորդ յամի տեառն Մ․Լ․Ի․ ինքնակալեալ ամս Ի․ և ամիսք Ը․ ա-ձիս ասեն. ընդ Հայումն՝ Կոզղիոս առի սա. զԿոզղիազերրիկս զՄակեդօնիս յաղ-թեալ ուերեաց. նաև Սլամնաց յաղ-թեաց, և ընակ-ն հիւանդութեամբ մե-ռաւ անզաւակ։

Օրեգինոս սկսաւ յամի տեառն Մ․Լ․Ի․ ինքնակալեաց ամս Է։ Այր խո-հեմ և պատերազմօղ. հինգ անգամ զԳոթացիս կոտորեալ յաղթեաց։ Սա առաջին եդ 'ի գլուխ իւր թագ կայսե-րական. զոր այժմ յաւուր ձեռնադրու-թեան սովոր է դնել Փափն։ Ի սմանէ ձեւոց թագ դնել թագաւորին. սա նոյ-

բռնեալ զպայծառ քաղաքն Հռոմայ. առ չինելոյ 'ի Հռոմ զառաջին արեգականն՝ անշուք ակայք և մեծամեծ զօրգոյք։ Սա ուսոյց մանկանց ուսանել գիր խօսել. սա ևս եհան հալածանս քրիստոնէից։ Սա հարաւ ի կայծակէ աստուածեալ մարմնովն. բայց ոչ սատակեցաւ։ Սա փառն զառագութեանն ստանաւ յիրայնոյն և թաղեցաւ յուրայն Հռոմայ. որ և պատուեցին արձանօք ըստ հնոյն քաղաքաց։

Դեկոս՝ որ է Տացիոս՝ սկսաւ յամի Տեառն Մ՟ԽԹ. ինքնակալեալ ամիս Է։ Սա այր քաջ՝ բայց յոյժ ամբարիշտ, այլ ոչ ժամանեաց չար առնել և յանկարծամահ սատակեցաւ։

Գրոբոս սկսաւ յամի Տեառն Մ՟ԽԹ. ինքնակալեալ ամս Բ։ Սա ազգաւ Պարսիկ, այր հմուտ պատերազմաց, բազում յիշատակս չարս եթող իւրոց յետագա-

ւթին։ Սա մինչ որդւով իւրով անցա-նէր զօրօք ընդ գետն՝ խեղդեցաւ մերձ ՚ի Սերբիայ։ Յաւուրս սորա յայտնեցաւ գերձուածն Սանկղէի։

Փլօրիանոս սկսաւ յամի Տեառն Մ՝ՁԴ. ինքնակալեալ ամս երիս։ Արժանի յի-շատակի ինչ ոչ արար։ Եւ ՚ի դարձն ՚ի պատերազմէն մեռաւ ՚ի ճանապարհին. ո-մանք ասեն Է. ամ՝ թագաւորեալ։

Կարոս սկսաւ յամի Տեառն Մ՝ՁԵ. ինքնակալեաց ամս Բ. ընդ Կարինոսի և Նումերիանոսի։ Սա չար և ժանտ։ Սա ՚ի փոքր գետ խեղդեցաւ, և գերեզման որդւոց սորա մնացին։

Դիոկղետիանոս սկսաւ յամի Տեառն Մ՝ՁԷ. ընդ Մաքսիմիանոսի ինքնակալ-եալ ամս ԻԱ։ Մաքսիմիանոս կայսր գործ-ակցեալ Դիոկղետիանոսի՝ որ սանկոր-գէր՝ ՚ի Գաղղիայ ընդ դէմ թշնամեաց նոցա. և իբրև դարձաւ յաղթութեամբ,

աթոռակից և ինքնակալ. Մաքսիմիանոսի եղաւ 'ի Մեդիոլանոն: Սա Դիոկղետիանոս նախագահեաց ակամբ և մարգարտօք սովորութիւն արար զգենուլ: Յաւուրս սոցա յարեաւ չար և դժնդակ հալածումն 'ի վերայ քրիստոնէից, ջնջեաց և այրեաց. և հրաման եհան ամենեցին ոչ ուսանիլ զգիրս Քրիստոսական. զայն չարիս գործեցին Մաքսիմիանոս յարեւմուտս՝ և Դիոկղետիանոս 'ի Կոստանդնուպօլիս և յարևելս զամս Ժ: Եւ զանազան տանջանարանս զոհին և նսեմեցին: Եւ Լեգէոն մի որ է ՑՈԿԶ. զօրք՝ քրիստոնեայն 'ի նեղ տեղի մի կալեալ՝ զամենեսեան կոտորեցին. որք հրամանաւ նորա 'ի պատերազմ գնային: Եւ 'ի Հռոմ և 'ի շրջակայս նորա Լ. օրն ԺԷՌ. անձինս նահատակեաց՝ ընդ այր ընդ կին և ընդ մանկունս: զԿոզմա և զԴամիանոս սուրբսն 'ի Եգիա քաղաքի Եւ զսուրբն Գէորգի յաշխարհն Պաղեստինոյ մերձ Ե. կամ Ը. մղոն 'ի քաղաքն Լոյդ՝ նահատակեցին: Եւ 'ի Նիկոմիդիա

քաղաքն՝ Նիկոմիդիա՝ յաւուր ծննդեանն Քրիստոսի 'ի մէջ եկեղեցւոյն ԻՌ. անձինս փակեցին և այրեցին։ Եւ յետ այսքան չարեաց Դիոկղետիանոս 'ի Նիկոմիդայ քաղաքին դեղատուութեամբ մեռաւ։ Եւ Մաքսիմիանոս որով խնդրեալ բարձաւ ասեն թէ՝ երկոցուն մահն 'ի մի օր հանդիպեալ կորեան 'ի կենաց։

Կալթերիոս Մաքսիմիանոսն ընդ Կոստանդեայն Խլորոսի սկսաւ յամի Տեառն ՅԲ։ Կալթերիոս երկու ամ թագաւորեաց. և Կոստանդիոս Ժ.Ը.։ Սոքա իբրև թագաւորեցին, զկայսրութիւնն յերկուս բաժանեցին. զի Կալթերիոս նստաւ յԱլամանաց աշխարհին և զամենայն հիւսիսոյ կողմն և զԱսիա արևելեան աշխարհօքն կալեալ տիրեաց, և Կոստանդիոս զԳաղղիա։ Կալթերիոս՝ այր գազազ և հպարտ 'ի գիրս և 'ի խօսս և 'ի հարցմունս. որ և կեանքն փառամոլիկ եղև։ Ի ժամանակս սորին կատարեցաւ սրբուհին Կատարինէ։

Կոստանդին՝ յետ մահուան Կայեթրիոսի՝ ինքնակալեաց ամս ԺԴ։ Էր սա այր հանճարեղ և հեզ. որ հնազանդեցոյց զՄակեդոնիա ընդ բազում զօրօք ՚ի վերայ նորա։ Զօր երկեալ ամենայն աշխարհն նեղքին և արտաքին՝ ամենայն արեւմտական կողմանքն և Խուզաք և բարբարոս ազգն հնազանդեցան սմա։ Սա ՚ի ժամանակին ՚ի պատերազմն Լն՝ առեն՝ զդուստր Թէոֆին Պօլթանիոյ զանհամեման զեղեցիկն սիրեաց և ննջեաց ընդ նմա, բայց ոչ ամուսնութեամբ, այլ հարճութեամբ. վասն սորա ասեն՝ թէ՝ յերկինս խաչ ետես և լուսոյ ձայն՝ թէ, այսու նշանաւ յաղթեա՛։ Զօր արարեալ՝ յաղթեաց Հռոմայ և կոտորեաց զզօրս նորա, և տիրեաց ամենայն աշխարհի։

Կոստանդիանոս մեծն սկսաւ յամի Տեառն ՅԺԳ. ինքնակալեալ ամս ԼԸ։ Սա կոչեցաւ մեծահաւատ։ Սա հրաման եհան՝ զի քրիստոնեայքն համարձակ կաց-

ցին։ Սա Կոստանդիանոս որդի էր Կոստան-
դեայ ՚ի Հեղինեայ ծնեալ. զոր բերեալ
կայսերացոյց զնա՝ հայր իւր. և նշանա-
խաչին՝ զոր եթող նշանակ հայրն իւր,
նախ գնաց ՚ի պատերազմ և յաղթեաց,
և կալաւ զինքնակալութիւնն։ Նա զերդ-
մամբ կնոջն իւրոյ երարձ . . . խաչն և
հալածեաց քրիստոնեայս, և եղև անժշ-
կելի գաղի, մինչ որ մկրտեցաւ ՚ի Սեղ-
բեստրոսէ Հայրապետէն, և ապա բժշկե-
ցաւ։ Նա շինեաց ՚ի քաղաքն Հռոմ՝
զկայսերական եկեղեցին սրբոյն Պետրոսի
և Պօղոսի և զՄկրտչին. և զամենայն իշ-
խանութիւնն Հռոմայ ետ Հայրապետին.
և յետոյ եկեալ ՚ի Բիւզանդիոյ՝ պարս-
պեաց զնա՝ և կոչեաց յիւր անունն։ Սա
առաքեաց զմայրն իւր Հեղինէ՝ յԵրուսա-
ղէմ, որ եգիտ զսուրբ խաչն Քրիստոսի և
շինեաց զսուրբ Ծնունդն, զսուրբ Յարու-
թիւնն, զսուրբ Համբարձումն, և զայլ
անօրինական եկեղեցիսն։ Նա տարաւ թա-
գաւորէն ընծայ զմասն ՚ի կենաց փայտէն.

և զմի բևեռն Քրիստոսի, զոր Թագաւորն եդ 'ի ծայր սանձին, որ մինչ 'ի ձեռին խուրում կայր։ Սմա երեք որդիք եղեն, Կոստանդին՝ Կոստաս և Կոստանդիանոս։ Յաւուրս սորին եղև ժողովն Նիկիոյ ՅԺԸ. Հայրապետաց վասն Արիոսի։ Սա մեռաւ յՆիկոմիդիա, և բերեալ թաղեցաւ 'ի Կոստանդնուպոլիս։

Կոստանդին երկրորդն՝ ընդ Կոստայ և Կոստանդիանոսի. սոքա երեք եղբարք՝ որդիք էին մեծին Կոստանդիանոսի. սկսան յամի Տեառն ՅԼԷ. ինքնակալեալք զամս ԻԴ.։ Սոքա ոչ կալան զհմտութիւն և ոչ զառողջ խորհուրդս, վասն այն բաժանեցան 'ի Հռոմայեցւոց և յարեան 'ի վերայ միմեանց. և 'ի պատերազմին մեռաւ միջակ եղբայրն, որ ուղղափառ էր, և բազում զօրք սպանեցան, և երկոքեան հաշտեցան։ Իսկ կրտսեր եղբայրն, քանզի արիոսական էր, պատրեաց զմեծ եղբայրն զուղղափառն Կոստանդիանոս, արար զնա

Քրիստոսի։ Որ և բազում հալածանս յա-րոյց ուղղափառաց, և զամենայն եկեղեցիս յանձնեաց չարափառացն։ Յաւուրս սորա երևեցաւ Խաչն լուսեղէն ՚ի սուրբ քա-ղաքն Երուսաղէմ, ՚ի Հայրապետութեան մեծին Կիւրղի, որ գրեաց զպատճէնն առ Կոստանդին, բայց ոչ հաւատաց. և գը-նաց ՚ի Պարս ՚ի պատերազմ։ Եւ Աթա-նաս դարձաւ յաքսորանացն. յայնմ ժա-մանակի Անտոն Ճգնաւորն ՃԵ. ամաց վախճանեցաւ ՚ի Թեբայիդ։ Եւ երբ դար-ձաւ Կոստանդին ՚ի պատերազմէն և մուտ յեկեղեցին Քրիստոսի և հայհոյեաց զՔրիս-տոս, և որ առժամայն հերձեալ՝ պատառե-ցաւ փոր նորա և աղիքն հեղեալ տապալե-ցաւ չար մահուամբ և կորեաւ ՚ի կենաց։

Յուլիանոս ուրացողն սկսաւ յամի Տեառն ՅԿԱ. թագաւորել ամս Ա. և ամիսս Ը։ Սա որդի գոլով եղբօրն Կոս-տանդիանոսի մեծի, որ մեռաւ, մնալով Յուլիանոս մանուկ մատաղ, և անուն հօ-

րըն Կոստանդ։ Սա գնաց յԱթէնս, և ու-
սումնակցեցաւ Գրիգորի և Բարսղի։
Եւ զարգացեալ կարգեցաւ 'ի յորդւոյն
մեծին Կոստանդիանոսի՝ զօրավար արևե-
լից։ Եւ հպարտացեալ 'ի վերայ յաղթու-
թեանն՝ կամէր թագաւորել. զոր իմացեալ
Կոստանդեայ թագաւորին, սպանանել կա-
մէր զնա։ Որ և փախեալ աննշանեաց զին-
քըն և եղև աբեղայ 'ի վանս ինչ։ Եւ
իբրև մեռաւ հօրեղբօրորդին իւր Կոստանդ
թագաւորն, սա ուրացող զՔրիստոս՝
Յուլիանոս՝ միաձեռն թագաւորեաց
Հռոմայ և Կոստանդնուպօլսոյ։ Եւ բա-
զում քրիստոնեայս նահատակեաց. և գը-
նացեալ յԵրուսաղէմ՝ զամենայն տնօրի-
նական տեղիսն Քրիստոսի քակեաց։ Եւ
հրամայեաց ժողովել Հրէից և շինել
զտաճարն. զի սուտ հանցէ զբանն Քրիս-
տոսի՝ որ ասէ, մի՛ մնասցէ այդր քար 'ի վե-
րայ քարի։ Եւ իբրև կատարեցին, էջ հուր
յերկնից և այրեաց զամենայն զշէնք տա-
ճարին։ Եւ Յուլիանոս բարկացեալ՝ նա-

հատանելոց զՆիկողոս և զհայր նորա. և ասեն թէ՝ զոսկերսն Եղիսէի Մարգարէին եհան և այրեաց հրով, և անցեալ գնաց ի Պարսս պատերազմել ընդ Շապհոյ. և յայտնապէս ի նոյն տեղին սպանաւ ի Մերկերիոսէ՝ հրամանաւ սուրբ Աստուածածնին։

Յովիանոս՝ որ է Ռօմեան, սկսաւ յամի Տեառն ՅԿԳ. թագաւորեալ ամս ԺԱ. և ամիսս Ա. ամ՝ ամեն՝ թագաւորեալ ըստ պատմագրաց Հայոց՝ և ուղղափառութեամբ վախճանեալ։ Սա քրիստոնեայ զօրով նախ՝ մինչ զօրավար էր զօրացն Յուլիանոսի, հարկեցաւ ի նմանէ՝ կամ ուրանալ զՔրիստոս, և կամ զրկել ի պատուոյն. իսկ նա զպատիւն արհամարհեաց և զՔրիստոս ոչ ուրացաւ։ Իսկ յետ սատակման Յուլիանոսի՝ զօրքն թագաւորեցուցին զՅովիանոս ընդ եղբօր իւրում Վաղէնտիանոսի։ Իսկ իբրև եկն ի Պարսից ի Կոստանդնուպօլիս և նստաւ յաթոռ թագա-

ւորութեան, եղիցի Յորդանան ուրացաւ զՔրիստոս՝ որպէս զՅուլիանոս: Այս հնազանդեցոյց զաշխարհն Պուլղարաց խուռվ հրմնութեամբն և կարգութեամբն: Էր սա յոյժ խոհեմ և հանճարեղ, այր պարզախօս և պարզալեզու: Սա մինչ էր ՚ի պատերազմին և տիրէր քաղաքացն Ալամանաց, եկն ՚ի քաղաք մի Յորխոս անուն, և յանկարծակի արեան բղխեալ ընդ բերանն և ընդ քիթն, և այնպէս չարաչար մեռաւ:

Վաղէնտիանոս՝ որ թարգմանի՝ քաջ կամ ուժեղ այր, ընդ եղբօր իւրում Վաղէսի սկսան յամի Տեառն ՅԿԴ: Եգնակալեալ ամս չորս՝ ընդ Վաղէսի, Վաղէնտիանոս ուղղափառ ՚ի Հռոմ, և Վաղէս չարափառ ՚ի Կոստանդնուպոլիս: Սա Վաղէս աքսորեաց զՀայրապետն մեր զՏէր Ներսէս՝ վասն սատակման որդւոյն իւրոյ: Սա Վաղէս դնաց ՚ի վերայ Գօթացւոց՝ որ են Տուլէշք՝ ՚ի պատերազմ, և պարտեալ փախեաւ ՚ի նոցանէ. և Գօթա-

ցիքն փութացան զօրք զկնի նորա՝ և պա-
տեցին զգեօղն՝ յորում էր։ Նա և իւրն ոչ
գային, հուր արկին 'ի գեօղն։ Իսկ նա՝ զի
թագուցեալ էր 'ի մարագ յարդի, ոչ կա-
րաց գերծանել, այլ անդէն այրեցաւ յո-
բինակ հանդերձեալ հրոյն՝ զոր ընդունե-
լոց է զատուցմունս ըստ չար գործոց իւ-
րոց։ Այս հրաման եհան, զի և կարգաւորք
եկեղեցւոյ բոլորեքեան եկեսցեն 'ի պատե-
րազմ, որպէս զի այնու ջնջեսցէ զքահանայս
յաշխարհէս և մի՛ մնասցեն։ Իսկ Վաղեն-
տիանոս արիւն արծկալով մեռաւ՝ որպէս
եղբայր իւր Յուլիանոս։

Գրատիանոս՝ որ թագաւորին՝ ընդհա-
զարդ, ընդ Թէոդոսի սկսաւ յամի Տեառն
ՅԴԲ. իշխանութեան ամս Զ։ Այս որդի
էր Վաղենտիանոսի, բայց թիւրածնունդ
և ոչ ուղիղ անուանութեամբ։ Յաւուրս
սորա անհամար զօրք Ալանիացւոց գան
'ի վերայ նորա, և նա գնաց ընդ դէմ նոցա,
և յանկարծակի 'ի նեղուց ճանապարհին

յարձակեցան թշնամիքն 'ի վերայ նորա, և նա աստուածոք խնդրեաց օգնութիւն 'ի Քրիստոսէ, և յարձակեալ 'ի վերայ նոցա Լ.Ռ. անձինս կոտորեաց 'ի թշնամեաց. Նա սրբեաց զամենայն Եկեղեցիս ի հերձուածոյն Արիոսի. քանզի յոյժ ուղղափառ էր 'ի հաւատս, 'ի կերպարանս և յմնգելս պարկեշտ և ամենձօղ ցանկութեան ախտից։ Նա նստուցեալ 'ի զօրացն, զայլ ոմն Մաքսիմիանոս անուն եդին թագաւոր։ Իսկ Գրատիանոս ոտիւքն և ձեռօքն փաթերակեցաւ և խարբալեցաւ։ Իսկ մեռեալ ոմանք հատին զգլուխ նորա և զորդւոյ նորա յայլում աւուրց ընդ խոն կոչեցեալ քաղաք, յետ դարձի յաքսորանացն իւրոց, զոր սպանին համանձր գլխոյն, և զմարմինն թողին անթաղ՝ գէշ անկեալ գազանաց երկրի և թռչնոց երկնից։

Թէոդոս մեծն և առաջին՝ քաղաքաՍպանիացի, սկսաւ յամի Տեառն ՅԴ.Ը. թագաւորեալ ամս ԺԸ. և ամիս ԺԸ։

Եւ ունիք ամն՝ Ժ.Է. քանզի՝ Իու՚ն ընդ մեծատան ամին Գ.Օ. ամե եւս, որ ընդ Գրատիանոսի կատարելոց: Սա զամենայն տաճարս կռոց կործանեաց, եւ զամենայն եկեղեցիս աղանդոց ՚ի հերձուածողաց: Սա ամենայն ազգաց սիրելի եւ հաճոյ լինէր. որ եւ բազում բարբարոսք՝ քրիստոնեայք եղեն վասն նորա: Սա եղեալ ՚ի պատերազմ ընդ բարբարոսն, եւ յաղթեաց նոցա ոչ զօրօք, այլ աղօթիւք եւ պահօք՝ վանեաց զնոսա խաղաղ: Էր սա արդարադատ եւ խոնարհ ՚ի պէտս հասարակաց: Եւ ունէր սովորութիւն, զի յամենայն օր որքան ծունր կրկնէին ամին մարդիկ, զայն ՚ի համարի պահէր, եւ յերեկոյին ե՛րբ առանձնանայր, զայնքան ծունր՝ ինքն՝ Աստուծոյ մատուցանէր եւ ասէր աղօթելով, Տէր՝ քեզ պարտ է անմահիդ երկրպագութիւն մատուցանել, եւ ոչ ինձ մահկանացուիս: Սա եհաս ՚ի սուրբ Յարութիւնն. եւ ՚ի մտանելն՝ ամենայն շրջեալ կանթեղքն վառեցան: Եւ խաղաղու-

թեամբ հանդերձ ՚ի Տէր ՚ի Միդուլէ քաղաք, և անդ թաղեցաւ. և յետոյ բերաւ ՚ի Կոստանդնուպօլիս: Յաւուրս սորա երանելին Հայրապետն Ներսէս դեղ մահու ընկալեալ ՚ի Պապ թագաւորէն, փոխեցաւ յաշխարհէս: Իսկ յամենից ամի՝ Թէ՝ ԻԵ. ամ թագաւորեալ, յաւուրս սորա զողանային քրիստոնեայք և Հրեայք զմիմեանս և ազատանիքն՝ անհաւատ կոչելով զեկեղեցիս: Արանենիոս ծերունին սենատուր էր սորին, և հրաժարեալ գնաց յանապատ. և անդ կացեալ հանգեաւ ՚ի Քրիստոս:

Արկադէոս որդի Թէոդոսի՝ ընդ եղբօր իւրոյ Ոնորիոսի՝ սկսան յամի Տեառն Գ.Ղ՛Թ. ինքնակալեալ ամս ԺԳ.: Իսկ սա այր բարի և հանճարեղ ամենայն զօրութեամբ: Յաւուրս սորա թագաւորն Ալարիկոս Գօթացւոց ՚ի Թուրինգէ եկեալ զծովն բազում զօրօք, և հասեալ ՚ի Հռոմ՝ եմուտ ՚ի քաղաքն և սկսաւ անխնայ կոտո-

բեւ զամենայն հասակ, և զամենայն շէնքն հրով այրեալ և յատակեալ՝ և հրամանյեալ, զի նախ՝ 'ի սրբութիւնն սկսանիցին՝ այսինքն 'ի կայսերական եկեղեցիսն սրբոցն Պետրոսի և Պօղոսի, և սուրբ Փրկչին, և սուրբ Աստուածածնին. և կացեալ յաւուրս ինչ՝ գնաց: Իսկ զայլ տեղիս ես աւերեալ 'ի ճանապարհին յանկարծամահ սատակեցաւ. աւուրց ինչ յետոյ՝ էջ կայծակ յերկնից և այրեաց զմնացեալ շէնքն Հռոմայ քաղաքին. և ուրախութիւն յոյժ եղև բարբարոսաց. 'ի սորին Արկադէոսի ամն վերջին՝ հիմնարկեցաւ քաղաքն Վենէտիկ՝ ձեռամբ և բնակութեամբ Գրովացւոց, որք են Խրմացիք. զոր յետ աւերման քաղաքին իւրեանց՝ էանց ՆԳՃ. ամ՝ որ սուտ և անդ բնակէին. և յետոյ եկին 'ի Վենէտիկ, և շինեցին զնա յետ Քրիստոսի ԳՃԹ. ամին:

Օնորիոս՝ որդի մեծին Թէոդոսի՝ և եղբայր Արկադէոսի՝ սկսաւ յամի Տեառն

Գ.ՃԻԲ. Ինքնակալեալ ամս ԺԸ: Էր
սա գեղեցկատես կարգաւորեալ սահմանօք
նման հօրն իւրոյ Թէոդոսի: Սմա ասէին՝
ընդէ՞ր ոչ սպանանես զապստամբսն. պա-
տասխանէր՝ ո թէ՛ և զսպանեալսն կարէաք
յարուցանել: Ի սորին ժամանակս բռնա-
ւոր ոմն՝ անուն Հերովղիանոս, Գ.Ս.Հ.
նաւօք եկն յԱփրիկոյ 'ի Հռոմ՝ 'ի վերայ
Կոստանց տուկին, զոր Թագաւորն 'ի
Կոստանդնուպօլսէ յղեալ էր պահապան
քաղաքին Հռոմայ. զոր եղեալ Կոստանց
'ի վերայ Հերովղիանոսի 'ի պատերազմ՝
զամենայն զօրսն նորա կոտորեաց, միայն
Հերովղէս փախեալ զերծաւ: Այս Ոնո-
րիոս բարի մահուամբ վախճանեցաւ՝ ոչ
Թողեալ ժառանգ արու զաւակ, բայց երկու
դուստր՝ Մարիա և Հելենգիա. նմին հօրն
հետևեցան մահուամբ երկոքեան սոքա 'ի
մի օր՝ սակաւ աւուրբք զկնի մահուան հօրն
իւրեանց՝ մեռան. յաւուրս սորա Կիւրեղ
Աղէկսանդրացին փայլեաց յերկրի, և
Յերոնիմոս Ձ. ամաց վախճանի 'ի Տէր:

Թէոդոս երկրորդ՝ որ և փոքր կոչի, ինք-
նակալեալ յամի Տեառն ՙՆԼԸ. Թագա-
ւորեալ ամս ԽԲ: Սա էր որդի Արկադէ-
ոսի. ընդ հօրեղբօրն իւրում՝ զարևելեանն
կառավարէր զիշխանութիւն: Եւ յետ
մահուանն Արկադէոսի՝ միահեծան տիր-
եաց: Սա 'ի բարձր Հայք 'ի գաւառն Կա-
րին, որ յարևելս քաղաք շինեաց՝ որ է
Արզրում՝ որ Թարգմանի Հող Հռոմոց.
ընդ այն ժամանակս Մ՝անգաղացիք անցին
յԱփրիկէ զծովն Սեփթէ. և զամենայն
աշխարհս Սպանիոյ աւար հարին և աւե-
րեցին զերկիրն: Ի սորին ժամանակին
յայտնեցաւ ՙՆեստոր աղանդն՝ Եպիսկո-
պոսն Կոստանդնուպօլսոյ, որ ժողով ԵՃ.
Հայրապետաց եղև յԵփեսոս քաղաքի:
Սա մեռաւ և Թաղեցաւ 'ի Կոստանդնու-
պօլիս. յաւուրս սորա եղև իր զարմանալի
ի Կրետէս կղզին. զի սատանայ երևեցաւ Հրէ-
իցն ասելով, թէ՝ ես եմ Մ՝ովսէս, որ ա-
ռաքեցայ յԱստուծոյ՝ տանել զձեզ դար-
ձեալ յերկիրն Աւետեաց՝ ցամաք ոտիւք

ընդ ծովն. զոր իբրեւ գնացին ընդ ծովն, բազումք խեղդեցան. եւ որք զերծան՝ հաւատացին 'ի Քրիստոս: Ի սորին ժամանակին յարեան մանկունքն Եփեսոսի ՃԿ. Թ. ամաց յետոյ, եւ գնացին առաջի Թէոդոսի, եւ դարձան 'ի յայրն իւրեանց, եւ իսկոյն ննջեցին 'ի Քրիստոս. որոց յիշատակաւ Տէր մեզ ողորմեսցի:

Մարկիանոս՝ յիշխանացն 'ի Կոստանդնուպօլիս եղեալ եղեւ թագաւոր, եւ Վաղենտինիանոս յարեւմուտս թագաւոր, սկսան յամի Տեառն ՆԿ.Օ. ինքնակալեալք ամս Է: Սա Մարկիանոս՝ ըստ ոմանց փեսայ գոլով Թէոդոսի՝ ընդ Պօղքէր քոյր նորա: Ի սորին ժամանակին եւ հրամանաւ սորին եղեւ ժողովն Քաղկեդոնի ՈԼ.Օ. Եպիսկոպոսաց՝ աղաչանօք կնոջ իւրոյ Պօղքէրի. զոր 'ի Նեստորէ մերժեալ ասեն, եւ էր սիրելի Փլաբիանոսի եւ Թէոդորիտոսի, զորս նզովեցին յԵփեսոս. եւ Պօղքէր վասըն նոցա վրէժխնդրութեանն՝ եւ առնել

զժողովն Քաղկեդոնի. յետոյ և 'ի Հայոց թարգմանչացն դարձեալքն յԱթենայ գնացին անդ, բայց ոչ յայտնեցին զնեքեանս յաՀէ Թագուհւոյն. որք էին Յովսէփ Պաղանեցին և Եզնակ Կողբացին. և եկեալ 'ի Հայք պատմեցին զբանս ժողովոյն. որք ասացին Բ. կամք՝ և երկու ներգործութիւնք 'ի Քրիստոս, և զանգոսնելի կիրս եղին 'ի Քրիստոս: Եւ Հալածեցին զՀայս և զԱսորիս՝ առաւել զկարգաւորս և զարեգայս: Եւ զՄիջագետս աշխարՀն անապատ արարին, զի աւելի քան զԳ. ՌՃ. վանք քակեցին: Եւ զարեգայսն գնէին 'ի մէջ սանի և խարշէին: Իսկ ինքն Մարկիանոս յետ այսքան չարութեանցն՝ զոր Հասոյց եկեղեցւոյ, սպանաւ 'ի զօրաց իւրոց դառն մաՀուամբ:

Նեոն առաջին՝ կամ անուն Օնքոս կոչեցեալ՝ սկսաւ յամի Տեառն ՆՀԲ. ինքնակալեալ ամս ԺԲ. և ամիսք ԺԵ. ասեն: Ընդ սորին ժամանակն Բ. ամիսք

ի զօրավարացն ապստամբեցան 'ի նմանէ, և բազում աշխարհաց արևմտից տիրեցին, և զամենայն հարկսն Թագաւորին իւրեանց առին, և բազում անձինս կոտորեցին, և տիրեցին բոլոր Իտալիոյ ԺԸ. տարի: Սան Լեոնի՝ անուն՝ 'ի յազգէն Հայոց լինել, և էր՝ անուն՝ անդեաւ Մծբնեցի և աղքատ շինական. և յաւուր միում մինչ աշխատեալ էր և ննջեալ 'ի ներքոյ ծառի միում, եկին առ նա արք երեք Հրեայք, և խիթեալ զնա՝ ասեն, ընդէ՞ր յանհոգս ննջես Թագաւո՛ր աշխարհի: Եւ նա զարթուցեալ՝ ասէ, զի՞ է, զի՞ ասացիք ինձ շինականիս Թագաւոր: Եւ նոքա՝ ասեն, մեք որդիք մարգարէից եմք և Աստուած յայտնեաց մեզ վասն քո՝ որ Թագաւոր լինելոց ես: Արդ՝ արի՛ և գնա՛ 'ի Կոստանդնուպօլիս. բայց ուխտեա՛ Աստուծոյ, զի յայնմ ժամու՝ յորում Թագաւորեսցես, զոր ինչ հրաման լիցի քեզ յԱստուծոյ՝ 'ի մէնջ ունել՝ կատարեսցես, զի հաստատեսցի Թագաւորութիւն քո: Եւ սորա գնացեալ

անդ և կացեալ սպասաւորութեամբ մի-առ մի՛ եղ 'ի կայսերութիւն: Եւ իբրև դի-տացին՝ թէ թագաւորեաց, գնացին առ նա և ասեն, այս է Հրամանն Աստուծոյ, որ պատ-կերք՝ զոր ունիք յեկեղեցիս և 'ի տունս ձեր, խորտակել Հրամայեա՛, զի կուռք են և պիղծ: Սա Լևոն յղեաց 'ի Հռոմ և յա-մենայն տեղիս, և պատճառանօք զամենայն պատկերս սրբոց և զՓրկչին և զՏիրամօրն ետ բերել 'ի Կոստանդնուպօլիս. և բեր-եալ զամենայն 'ի մի տեղի՝ այրեաց Հրով: Եւ յաւուրս սորա՝ մարմին Եղիսէի մար-գարէին փոխի յԱղէկսանդրիա. և զմարմին Աւետարանչին Մարկոսի գողացեալ 'ի Վենէտիկ տարան, և անդ կայ փառօք 'ի ներքոյ ասեն միոյ. . . . զայս Լևոն կալաւ աչացաւութիւն սաստիկ, և չարաչար մե-ռաւ ըստ արժանոյն:

Զենոն Կոստանդ սկսաւ յամի Տեա-ռըն ՆՁԳ. ինքնակալեալ ամս ԻԲ. և ոմանք ասեն ՃԳ: Էր սա միաբնակ, բայց

որկրամոլ, որ յաւուր բարեկենդանի միոյ ագահեալ ուտէր և ըմպէր մինչ 'ի լուսանալ պահոցն. ապա յետ ննջելոյն յարուցեալ 'ի քնոյ՝ մնացած ինչ մսոյ եգիտ յատամունսն, զի Հռոմք ոչ ունէին սովորութիւն յետ հացին լուանալ զբերանս իւրեանց և մաքրել. ապա կոչեալ զեպիսկոպոսն, և հրամայէ նմա՝ զի 'նզովիւք չափ կանոնեսցէ զվերջին բարեկենդանն առանց մսոյ ուտել, և այս մնաց մինչև ցայսօր 'ի մէջ Յունաց:

Զենոն երկրորդ, որ և հալածեաց զՔաղկեդոնիկսն: Սա կամեցաւ զորդին Լեւոնի սպանանել, բայց մայրն իւր զորդին պահեաց, և զայն օտար մանուկ մնուցեալ՝ որպէս զիւր որդի, զոր տարեալ սպանին:

Անաստասիոս սկսաւ յամի Տեառն Ն.Ղ.Ա. ինքնակալեալ ամս Ի.Է.: Սա միաբանակ էր և օգնական Հայոց և Ասորոց,

և հալածօղ երկաբնակաց, և էր չարաբախտ. քանզի 'ի բազում կողմանց թշնամիքն յարեան 'ի վերայ նորա. և զի Արիոստական եղև և թողաւ 'ի ձեռացն Աստուծոյ: Սա խափանեաց զդպրատունն ի Ստամբօլ, զի գործ անարժան գտաւ 'ի նոսա՝ արուամոլութիւն. և եղև քաղաքին մեծ տրտմութիւն: Յաւուրս սորա 'ի շարժէ ընկղմեցաւ Նիկոպօլիս: Եւ ինքն Անաստասիոս դեղակուր մեռաւ:

Յուստինոս՝ որ և Յուստինիանոս՝ նստաւ յամի Տեառն ՇԺԸ. ինքնակալեալ ամս Թ: Սա ջերմեռանդ գոլով 'ի հաւատս Բ. բնութեան, զամենայն աքսորեալ Եպիսկոպոսունսն դարձոյց յաթոռս իւրեանց՝ և զԴ. Ժ. եկեղեցին եբաց, բազում նեղութիւնս հասոյց միաբնակաց:

Յուստինոս երկրորդ նստաւ յամի Տեառն ՇԿԵ. ինքնակալեալ ամս ԺԳ: Էր սա երկաբնակ: Սա տայ տօնել զտօն

Տեառնընդառաջին ընդ Յայտնութեան. և ոչ յընդունելն Երուսաղէմացւոց, զորօք թագաւորին սաստիկ նեղութիւնս սպառնային առնել: Իսկ սուրբ Աստուածածինն երևեալ ՚ի սեանն՝ որ ՚ի սուրբ Յարութեանն՝ ջուր բղխեցոյց և բազում բժշկութիւնս եղև այնուիկ, և յամօթ եղեն և գնացին: Սա շինեաց զսուրբն Սոփիա ՚ի Ստամպօլ: Մեռաւ և թաղեցաւ ՚ի նոյն եկեղեցին: Սմանք էր որդի՝ անուն զա Ճուստինոսի:

Ճուստինոս երրորդ սկսաւ յամի Տեառն ՇԿԳ. ինքնակալեալ ամս ԺԲ. ուղղափառ հաւատով շինօղ եկեղեցեաց և ամենայն աշխարհի ընդարձակօղ խաղաղութեան. բայց կին նորա չար էր և ինքն երկարնակ:

Տիբերոս սկսաւ յամի Տեառն ՇՀԸ. ինքնակալեալ ամս Ը. ողորմած և աղքատասէր, մինչ զի ոչինչ մնայ ՚ի գանձս իւր:

Եւ եռես զսալ մի յարքունիս իւր և խաչ 'ի վերայ նորա. և հրամայեաց զայն բառնալ անտի՝ ասելով. մեք քրիստոնեայքս 'ի ճակատս և 'ի դէմս մեր դրոշմեմք զսա, որոյ անպատի- ճնալ՝ մեղանք է մեզ. և բարձին զայն. և մինչ ես եւ 'ի ներքոյ բարձին, և երևեցաւ անհատ զանձ 'ի ներքոյ նորա. և որքա՛ն եկաց, դարձեալ այն մսխելով ոչ պակասեաց։

Մաւրիկոս՝ որ է Մօրիկ՝ սկսաւ յամի Տեառն Շ․ՁԳ․․ թագաւորել ամս Ի։ Սա Օշականեցի՝ և Հայ ազգաւ, և խաղաղասէր աշխարհի։ Սա եբարձ զոռմիկ զօրացն. որում կուտեալ զօրօքն 'ի վերայ նորա, և նա փախեալ աննշանացեալ։ Յաւուրս սորա գտաւ անկար պատմուճանն Քրիստոսի 'ի քաղաքն Արփաթ՝ որ է Կափառնայումն, և տարեալ եդին յԵրուսաղէմ։ Բայց ոմանք՝ ասեն՝ թէ սպանին զՄօրիկ և զորդիս նորա։ Եւ թագաւորն Պարսից վրէժխնդիր եղև նորա, և չա-

կեաց զամենայն տունն Յունաց մինչև Երուսաղէմ՝ որ է Հրէաստան։

Փոկաս սկսաւ յամի Տեառն ՈՃԲ. թագաւորել ամս Ը։ Յաւուրս սորա առին Պարսիկք զԵրուսաղէմ և բազում աշխարհս ՚ի Յունաց. նկն ՚ի յԱփրիկոյ Հերակլիոս և սպան զՓոկաս։ Յաւուրս սորա կարգեցաւ յիշատակ և տօնն ամենայն սրբոցն Աստուծոյ ՚ի նոյեմբերի մէկին։

Հերակլիոս սկսաւ յամի Տեառն ՈՃԺ. թագաւորել ամս ԽԳ։ Յաւուրս սորա Պարսիկք գնացեալ յԵրուսաղէմ այրեցին զամենայն տնօրինական տեղիսն, և զսուրբ խաչն ընդ Պարսիկքին տարան գերի. և գնացեալ Հերակլ ՚ի Պարս, յաղթեաց նոցա և դարձոյց զսուրբ խաչն յԵրուսաղէմ։ Եւ զարդարեալ զինքն՝ ունելով զսուրբ խաչն ՚ի յուսն՝ ելանել կամէր ընդ դուռն Գողգոթային, և փակեցաւ ընդդէմ նորա։ Եւ

երեւեալ հրեշտակ Աստուծոյ՝ ասաց, Քրիստոս փրկիչն աշխարհի ոչ ել 'ի տեղիս յայս զարդարեալ: Նա եւ իբրեւ լուաւ, պատառատուն հանդերձիւ եբարձ զխաչն, եւ բացաւ դուռն: Սա հրամայեաց զեկեղեցին Հռոմայ՝ զլուխեկեղեցի ամել. զի Կոստանդիանոսն մինչ 'ի սա՝ զՍտամ-պօլսոյ եկեղեցին զլուխ առնէին՝ վասն թագաւորութեանն: Սա խաչն Քրիստոսի յերկուս բաժանեաց, զմին յԵրուսաղէմ եւ զմին յՍտամպօլ եդ. եւ հիմնադրեալ եւ անդամալոյծ լեալ մեռանի իւրով մահուամբ, բայց անիծիւք. զի էառ զդուստր եղբօր իւրոյ 'ի կնութիւն: Եւ սա գնաց Կաթուղիկոսն Ներսէս, եւ եղեւ երկարնակ, եւ մինչ ի.Զ. Կաթուղիկոս մնացին Քաղկեդոնիկ:

Կոստանդին չորրորդ սկսաւ յամի Տեառն Զ.ՃԼ.Դ. ինքնակալեալ ամս ԺԷ: Սա ընդ Հայոց եկեղեցոյն գոլով միաբան, գնացեալ 'ի Հռոմ քակեաց զեկեղե-

ցին մարմարաշինան, և տարեալ 'ի Միծի-լեայ, ինքն ևս 'ի զօրացն իւրեանց սպա-նաւ:

Կոստանդիանոս Ե. երրորդ սկսաւ յամի Տեառն ՈԿԸ. ինքնակալեալ ամս ԻԷ. և ոմանք ԻԶ. ամ՛ ասեն, և էր երկաբնակ. սա արար ժողով 'ի Կոստանդնուպոլիս ՐՃԻ. Եպիսկոպոսաց. սա վճարեալ զկեա-նըս իւր 'ի Կոստանդնուպոլիս՝ մեռաւ անդ:

Յուստինիանոս երկրորդ սկսաւ յամի Տեառն ՈՁԵ. ինքնակալեալ ամս Ժ. և ոմանք ԻԳ. ասեն: Սա Հակառակ էր եր՛ա-բնակաց: Լեոն պատրիկն Հատեալ զքիթ սորա՝ առաքեաց յաքսորս, և ինքն թագա-ւորեաց 'ի տեղի նորա:

Լեոն երկրորդ սկսաւ յամի Տեառն ՈՂԵ. ինքնակալեալ ամս երեք. էր միա-բնակ: Զսա զաւեալ Տիբերիոս կամէր ու-նել և առաքել յաքսորս. զոր իմացեալ

փախեաւ աննշանացեալ։ Սա զօրավիգ եղեւ միայնակ ազգաց։

Տիբերիոս երկրորդ սկսաւ յամի Տեառն ՈՂԸ․ ինքնակալեալ ամս Է։ Ի սորին աւուրսն՝ մինչ Յուստինոս յաքսորս դայր 'ի Սարուսայլթախ, փախեաւ և գնաց առ Տաճիկսն՝ առեալ զքայր իշխանի նոցա 'ի կնութիւն, և դարձեալ կայսերացաւ օգնականութեամբ նոցա․ և կալեալ զԼէոն արտաքսօղն իւր՝ կորոյս մահուամբ։

Յուստինիանոս աքսորեալն կրկին սկսաւ յամի Տեառն ՈՂԲ․ ինքնակալեալ ամս Զ․ և վասն աքսորանացն իւրոյ վրէժխնդրութեամբ գետս արեանց հեղեղեաց յերկրի․ քանզի հատեալ էին զքիթ նորա, և որքա՛ն կաթ արիւն կաթէր 'ի քըթէն, ինքն այնչափ արիւն հեղոյր․ և Փիլիպն եկն 'ի Սատամպօլ, և սպան զնա հանդերձ որդւովքն իւրովք։

Պիլիպպոս սկսաւ յամի Տեառն ՉԴ. Ինքնակալեալ ամս Ա. և կէս: Սա զպատկերն իւր եդ 'ի վերայ դրամից և առաքեաց ի Հռօմ, բայց ոչ ընկալան: Եւ նա ոխացեալ քակեաց զամենայն պատկերս եկեղեցեաց, և փախեաւ ի Սիծիլիա և անդ կայր:

Անաստասիոս սկսաւ յամի Տեառն ՉԵ. Ինքնակալեալ ամս երկու: Սա առաքեալ կալաւ զՊիլիպ և եհան զաչսն. և զի յոյժ չար գոլով՝ զօրքն ընկեցին զԹէոդոս 'ի Կայսերութենէ, և նա գնացեալ եմուտ 'ի վանս, և եղեալ քահանայ՝ անդէն մեռաւ:

Թէոդոս երրորդ սկսաւ յամի Տեառն ՉԸ. Ինքնակալեալ ամս մի: Եւ անկեալ յիշխանութենէն և գնացեալ 'ի վանս՝ եղև կղերիկոս, և զմնացեալ աւուրս իւր խաղաղութեամբ անցոյց:

Լեւոն սկսաւ յամի Տեառն ՉԹ. Ինքնակալեալ ամս ԻԴ: Յաւուրս սորա ելին Սարակինոսքն, և երեք ամ նեղեցին

զԿոստանդնուպօլիս. և ապա բազում նաւօք եկին 'ի վերայ քաղաքին Ատամպօլայ. և զօրութեամբ սուրբ Խաչին՝ ամենայն նաւքն 'ի ծովն ընկղմեցան: Սա հրամայեաց կոխել և այրել զպատկերսն տէրունականն և ամենայն սրբոց, որ և պատկերամարտ կոչեցաւ: Յաւուրս սորա Տաճիկքն Ափրիկոյ ընդ ծովն անցին, և զամենայն Սպանիա առին, զսուրբ Պետրոսի եկեղեցին՝ ձիոյ և ջորոյ ախոռ արարին:

Կոստանդին՝ որդի Լեւոնի՝ սկսաւ յամի Տեառն ՉԼԴ. ինքնակալեալ ամս ԼԵ: Սա ևս հակառակ պատկերաց սրբոց լինելով զբազում քրիստոնեայսն 'ի սուր սուսերի մաշեաց:

Լեոն սկսաւ յամի Տեառն ՉԿԹ. ինքնակալեալ ամս Ե: Սա անմտաբար եկեաց 'ի կեանս իւր: Յաւուր միում՝ յեկեղեցւոջն ետես թագ մի՝ որ ունէր 'ի վերայ իւր ակն կայծ. և յափշտակեալ զթագն եդ 'ի գը-

լուխ իւր, և խնկոյն կալաւ զնա ջերմն, և փողփողակի մեռաւ։

Կոստանդիանոս Մոնոմախ՝ և Հելինէ մայր նորա՝ սկսան յամի Տեառն ՉՀԴ. մայր և որդին ինքնակալեալք ամս ԺԵ. Մոնոմախս այս ԺԲ. ամաց թագաւորեաց. և զի եբարձ զիշխանութիւն մօրն, վասնորոյ և մայրն խարէութեամբ կալեալ կուրացոյց զնա. քանզի ցաւէր աչք նորա, և մայրն դեղոց պատճառօք՝ զխաւարեցուցանող մատոյց դեղ. և ինքն կառավարեաց զթագաւորութիւնն։ Յաւուրս սորա Յ՝Օ. եպիսկոպոսք ժողովեցան, և սահմանեցին զՀոգին սուրբ 'ի Հօրէ և (յՈրդւոյ) բղխեալ, որ էր թուականն քրիստոսի ԼՃՀԲ։

Նիկիֆօռոս սկսաւ յամի Տեառն ՉՁԹ. ինքնակալեալ ամս ինն։ Պատճառ թագաւորելոյ սորին այս էր, զի տաճիկք նախատէին զՅոյնսն՝ թէ կին է թագաւորն ձեր. և վասն այնր արհամարհանաց բերեալ թա-

գաւորեցուցանեն զՆիկիփորոս. և նա գնացեալ 'ի Պուլղարս, և նոքա զնա Փռանկ ոմն. զի կամեաց սպանել զմատաղ մանկունս անողորմաբար. յորոյ ժամանակի տէրութիւնն ինքնակալեցաւ 'ի յարևելեան կողմն, և ամենևին ոչինչ դարձաւ և պակասեաց:

Միխայէլ սկսաւ յամի Տեառն ՊԳԹ. ինքնակալեալ ամս երկու. զոր թագաւորեցուցին զօրքն յետ Նիկիփորայ. և ինքն թագաւորեաց և էր ողորմած յոյժ. զի զօրս Նիկիփորոս ապահովութեամբ ժողովեաց, սա 'ի պատշաճաւոր տեղիս շնորհեաց, և խաղաղութեամբ մնաց: Մինչև ցայս Փռանկքն ընդունէին զթագաւորութիւնն Կոստանդնուպօլսոյ. և աստ 'ի հետ փոխել առեն 'ի Փռանկս, զոր ես յայսմ վայրի՝ նախ՝ գրեմ զԿոստանդնուպօլսոյն՝ ըստ կարգութեանս, և յետոյ գրեմ ըզՓռանկացն 'ի Պրիստոսէ թուն ՊԳԹ. ամին ըստ համարագրական ոճոյն:

## ԹԱԳԱՒՈՐՔ ՑԱՑՆՑ ՍՏԱՄՊՕԼ ՆՍՏՕՂՔ

---

Թէոփիլոս թագաւորեաց ամս ԺԲ։ Յաւուրս սորա յայտնեցաւ ոմն Թամամ անուն, որ ասէր մի' առնուլ հարկս 'ի քրիստոնէից, ժողովեաց Լ՟Ռ. զօրս և գնաց յԵրուսաղէմ, և քակեաց զսուրբ Յարութիւնն. և սա ոչ կարաց օգնել սուրբ տեղեացն Քրիստոսի. և անարի իշխանութեամբ վճարեցաւ 'ի կենաց։

Միխայէլ թագաւորեաց ամս ԻԴ. ոմանք ԻԲ. ասեն։ Նու զի ոչ գոյր նորա որդի, առ նոցա զօրեալ մեռաւ։

Վասիլ թագաւորեաց ամս երկու, ոմանք ԻԸ. ասեն. այր որկրամոլ էր և վաւաշոտ՝ միշտ ոսկորի և ախտի խրում հետեւեալ իգասիրութեամբ բանելով զկեանս իւր։

Լեոն՝ որդի Վասլի՝ թագաւորեաց ամս ԻՕ։ Սա յանցաւոր գոլով օրինացն Աս-

տուծոյ՝ էառ Գ․ կին, և հռչակեաց թէ՝ առանց մեղաց է չորեքկնութիւնն, և ո՛չ գոյր յանդիմանիչ նորա. քանզի և Եպիսկոպոսունքն աշառէին գնմանէ որպէս զթագաւորէ։

Ալէքս՝ որդի Լևոնի՝ թագաւորեաց ամ մի, և ոմանք երեք ամեն։ Սա ոչինչ բարութեան լեալ գործող՝ գովութեանց անարժա՛նի մեռաւ առանց բարոյ։

Կոստանդին՝ որդի Լևոնի՝ թագաւորեաց ամս ՟ԺԵ։ Յաւուրս սորա երեք Պատրիարգունք նստան զկնի միմեանց 'ի Ստամպօլ․ զորոց ասեն թէ՝ կախարդ գոլով՝ 'ի ներքոյ սեղանոյն կուռս դնէին, վասն այն բարձին Յոյնք զվարագոյրն։ Եւ զայս անուանս յետոյ 'ի վերայ Հայոց եդին զլուանախանձն ոմանք 'ի նոցանէ, թէ՝ Հայք շուն պաշտեն 'ի խորանն իւրեանց. որոյ ստացողքն և ընդունողքն եղեցին Նզովեալք 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։

Ռոմանոս թագաւորեաց ամս Բ. ոմանք զՌոմանոս յառաջ ասեն՝ քան զԿոստանդին։ Սա հալածեաց զամենայն կարգաւորսն Հայոց՝ որ էին յիշխանութեանն Հռոմոց. որք ելեալ յաշխարհս Հայոց՝ շինեցին վանորայս և բնակեցան անդ. որոց առի Կարմնձաձոր և Կապուտքար և Հոռոմոսի վանք 'ի Շիրակ գաւառի։ Սա արար խաղաղութիւն ընդ Պուլղարս, և դադարեաց մարտն արեւմտից. պարապեցին և յարեւելս, և առին զԿարին և զԿամախ։ Յաւուրս սորա Աբաս՝ որդի Սմբատայ՝ շինէ 'ի Կարս զԱստուածաբնակ տաճարն զԿաթուղիկէն հրաշազան յօրինուածովք 'ի թուին Քրիստոսի ՋԼԱ։

Կոստանդիանոս Լէոն թագաւորեաց ամս ԽԶ։ Յաւուրս սորա տարան զդաստառակն Քրիստոսի յՈւրհայոյ 'ի Կոստանդնու քաղաք Կոստանդնի թագաւորութեան, և եղբայր նորա Վասիլ զօրապետ նորա՝ ընդ դէմ Տաճկաց յերկար

պատերազմեաց ամս բազումս: Յաւուրս սորա շինեցաւ Հաղբատ և Սանահին՝ ի թագաւորութեանն Հայոց Աշոտոյ ի թըւին Քրիստոսի ՋՀԶ:

Ռոմանոս՝ եղբօրորդի Կոստանդիանոսի թագաւորեաց ամս չորս: Սա գնաց ի պատերազմ յարեւելս. և էր ատեցող միաբնակաց. զբազումս յԱսորոց եսպան ի բանակի. և բարկութիւն Տեառն եղև ի վերայ Ռոմանոսի և սատակեցաւ չարաչար մահուամբ: Սա էառ զԿրետէս կղզին յԱգարացւոց՝ սաստիկ պատերազմաւ:

Նիկիփորոս թագաւորեաց ամս Է: Յաւուրս սորա օծաւ թագաւոր Հայոց Գագիկ ի Վահանայ. որ և դաշն ուխտի հաստատեաց ընդ Վրացիս. որք են կողմանք Կուրճաստանայ և Պաշաշուղայ: Էր Նիկիփորոս այր բարի և լի ամենայն առաքինութեամբ:

Յօհաննէս Զմշկիկն 'ի Զմշկածկոյ 'ի Թը-
ուին Հայոց ՆԺԷ. ամին գնացեալ 'ի Կոս-
տանդնուպօլիս՝ եմուտ 'ի ծառայութիւն
Թագաւորին Նիկիփօռայ: Նա յաւուր
միում սպան զմի 'ի ծառայակցաց իւրոց,
և Թագաւորն բարկացեալ աքսորեաց զնա
'ի կղզի ինչ. և զի էր Զմշկիկն անձնեայ և
գեղեցիկ, զոր տարփացեալ նմա Թագուհին՝
առաքեաց զոմն և երեր 'ի ծածուկ զԶմշկի-
կըն 'ի պալատն իւր. և ասէ ցնա, եթէ
սպանանես զՆիկիփօռոս, ես եղեց քեզ
կին, և Թագաւորեցուցից զքեզ. և ասէ Զը-
մըշկիկն, զի՞արդ կարեմ սպանանել զայր
Թագաւոր. և ասէ Թագուհին, ես ուսուցից
քեզ: Նա յերեկոյին մինչ ննջէր Թագաւո-
րըն առանձին՝ և ընթեռնոյր զԱստուածա-
յին գիրսն, եկն առ նա Թագուհին, և շա-
ղապատեցաւ զնովաւ. 'ի ծածուկ պինդ
կապեաց փոկովն զԹուրն Թագաւորին՝ և
գնաց: Նա ասէ ցԶմշկիկն, երթ անեբիկուզ
և սպան զնա. և վազեաց Զմշկիկն յանկար-
ծակի 'ի վերայ Թագաւորին. զոր տեսեալ

թագաւորն զնա ծանեաւ և ասէ, շո՜ւն կատաղի՛ զի՞նչ յուզես աստ. և ձգեալ զձեռն 'ի թուրն՝ զի հարցէ զնա. և ահա պատեալ էր, և հասեալ Զմշկիկն սպան զթագաւորն. զայս վասն ա՛յն արար բորբոքման այն և կանթոտն, զի փարէր իբրև զՇամիրամ։ Իսկ թագաւորն ծընաւոր և առաքինի էր. և այսու կերպիւ թագաւորեաց Զմշկիկն. բայց պահեաց զորդին Ռոմանոսի։ Իսկ հնազանդեցոյց զամենայն աշխարհ բաց 'ի քաղաքէն Տամթայ, որ սպանէին զզօրագլուխ նորա. զոր եկեալ թագաւորն 'ի Սամիսօլոյ՝ եկն 'ի վերայ Տամթայ։ Իսկ քաղաքացիքն սպանեալ էին զՏասան զտէր քաղաքին, և քոյրն Տասանին տիրէր քաղաքին. իբրև մօտեցաւ քաղաքին, քոյրն Տասանայ ել 'ի վերայ պարսպին՝ և ասէ ցնա, ո՞չ է քեզ ամօթ գալ 'ի վերայ կնոջ միոյ. իբրև գիտաց թագաւորն՝ թէ՝ սեղեխ իւր էր՝ մինչ էր 'ի Զմշկածակ, եթող զքաղաքն առանց քակելոյ՝ զոր երդուեալ էր, և հնազանդեցան

նմա։ Նա գնաց մինչև 'ի Բաբիլոն և հնազանդեցոյց զամենեսեան. և դարձաւ յԱնտիոք, 'ի Հայս, 'ի Դամասկոս, 'ի Եփրանան՝ ամենայն ծովեզերքն մինչև յԵրուսաղէմ, զորս էառ 'ի յԱրաբացւոց։ Նա եգիտ զպատկերն Քրիստոսի 'ի Պալպաք, և զհերսն Ակրաչին Քրիստոսի, և զհողաթափն Քրիստոսի։ Նա զպատճենն պատերազմին և յաղթութեան գրեաց Թագաւորին Հայոց Աշոտոյ, և դարձաւ 'ի Ստամպօլ. և յոյժ սգայր զմահուանն Նիկիփոռայ։ Նա բերեալ զՎասիլ և զԿոստանդին 'ի Ստամպօլ, և եղև մեծ հանդէս. յայնժամ Զմշկիկն առեալ զԹագն 'ի գլխոյ իւրմէ՝ եդ 'ի գլուխ Վասլի, և երկիր եպագ նմա 'ի վերայ երկրի. և ինքն հրաժարեալ յաշխարհէ՝ գնաց յանապատ։ Նա որ յերեկեան օրն Թագաւոր, այսօր ընդ աղքատս դադարէր կամաւոր աղքատութեամբ, զի ժառանգեսցէ զերանութիւն սուրբ աւետարանին՝ և ակնածեցէ

զանձն իւր յանպարտ արենէ Նիկիֆորայ, զոր արար դրդմամբ պիղծ թագուհոյն:

Կոռժան թագաւորեաց ամս Զ. յետ Չմշկիկայ. բայց Յոյնք զՎասիլ և զԿոստանդին ասեն՝ յետ Յովհաննիսին, զԿոռժան ոչ ասեն թագաւորել. և ճշմարիտն՝ Յունացն է:

Վասիլ թագաւորէ ձեռնտուութեամբ Չմշկիս Հայոց ամս ԼԸ: Սա եկեալ ՚ի Կիւլիկէ, մկրտեցաւ ՚ի վանքն Պաղակծեաց՝ և երկիր եպագ նմա: Յաւուրս սորա պարապեցաւ Անի. և Տէր Պետրոս գնաց առաջի նորա ՚ի Տրապիզոն, և արար հաշտութիւն, և օրհնեաց զջուրն: Յաւուրս սորա Գ. թագաւորք նստան Հայոց. և իբրև թագաւորեաց Շահն-Շահ Սմբատ՝ որդի Աշոտոյ, պարսպեաց զԱնի էր արկեալ ՚նմա բարձրաբերձ բրգօք և լայնատարած անդեօք յԱխուրեան գետոյն մինչև ՚ի Ծաղկաձորն. և շինեաց զԿաթուղիկէն պայծառ, զոր ոչ

կարաց աւարտել, զի ԺԳ. ամ Թագաւորեաց. և Կատրամինդէս Թագուհին կատարեաց ՚ի ՆԻԳ. Թուին։ Յաւուրս սորա էր սուրբն Գրիգոր Նարեկացին։

Կոստանդին՝ եղբայր Վասլի՝ Թագաւորեաց ամս Գ։ Յաւուրս սորա եղև արձակումն սատանայի։ Նա շինեաց սա վանորայս բազում ՚ի Հայս. նաև շինեաց զՆառաքար վանքն՝ որպէս ամրոց բերդի. շինեաց և զսուրբն Գրիգոր ՚ի ՋՆի, և զԽադնայրն և զԽոցկունս կոչեցեալ վանքն սուրբ Յովհաննէս և սուրբ Անտիփանոս։ Սա ոչ ունէր որդի, այլ դուստր մի. զոր ետ ՚ի կնութիւն Ռոմանոսի։ Սա Կոստանդին իբրև Թագաւորեաց, քակեաց զմահապարտից տունն, զոր շինեալ էր Վասիլ եղբայրըն իւր. քանզի կոչէր զօ և կամք յիշխանացն, և ՚ի տունն այն անտես յումեքէ կախէր յերկաթի ձանկով զգեստիւքն իւրովք. զոր ոչ գիտէին՝ թէ ի՞նչ եղև այրն այն՝ մինչև ՚ի մահն Վասիլի, և ապա գիտացին։

Ռոմանոս իշխան Թագաւորեաց ամս Ե։ Սա ոչինչ բարութեանց լեալ արժանի, քանզի յաւուր մեծի Եշաբաթոջ՝ յետ խոստակցութեանց և պարգևատուութեանց առ զօրս և իշխանս իւր, խնդրեաց ջուր ոսկի ամանովն, զի լուացի. և իբրև եմուտ 'ի ջուրն, յայնժամ խլեալ 'ի հերացն կոխեցաւ 'ի ջուրն՝ մինչև խեղդեցաւ յիւրայնոց սպասաւորացն. որոց մինն էր հետևեալ դրդմամբ Թագուհոյն։

Միխայէլ Թագաւորեաց ամս Է։ Սա էառ զկին Ռոմանոսի՝ իւր 'ի կնութիւնն. ուստի համբաւեալ արձանացաւ մահն Ռոմանոսի՝ բանիւ և չարութեամբ Թագուհոյն եղեալ։ Սա Միխայելի ունեցեալ եղև ցաւ դիւական. սա շինեաց զսուրբ Յարութիւնն. զոր Թամամ սուլտ քրիստոնէիւք գնացեալ յԵրուսաղէմ այրեաց զնա. յաւուրս Թէոփիլոսի ∸Ե·երրորդ Թագաւորի շինեաց Միխայէլ և զանարծաթ

բժշկաց եկեղեցի՝ արտաքոյ քաղաքին Երուսաղեմի սրբոյ։

Կոռոգէ Թագաւորեաց ամս Բ։ Յաւուրբս սորա գնաց Տէրն Պետրոս 'ի Հռոմս. և նենգեցին զԹագաւորն Գագիկ՝ չարութեամբ իշխանացն Հայոց. զի սա զԳագիկ երդմամբ տարաւ 'ի յԱնւոյ 'ի Կոստանդնուպօլիս, և խնդրէր զԱնի. և իբրև ոչ կամեցաւ Գագիկ տալ զքաղաքն Անի, Թագաւորն եդ առաջի նորա ՕԽ. բանալիս Անւոյ, զոր իշխանքն Հայոց 'ի գաղտ 'ի Գագկայ՝ յղեալ էին զբանալիսն առ Թագաւորն Կոստանդնուպօլսոյ. ոմանք ասեն զայս իր եղեալ 'ի ժամանակս Մօնոմախոյ՝ որ զկնի սորին հետազայի։

Մօնոմախ Կոստանդին՝ որ է միայնամարտ, Թագաւորեաց ամս ԺԲ. այր մեծամիտ և առատաձեռն. առ սովաւ խանգարեցաւ իշխանութիւնն Թագաւորութեան Հայոց 'ի տանէն Շիրակայ։

Կղօթօտոս ներքինին թագաւորեաց ամս Գ.։ Յաւուրս սորա փոխեցաւ Տէր Պետրոս Կաթուղիկոսն Հայոց ՚ի Սեբաստիա, կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս ԽԲ.։ Այս Կղօթօտոս աւերեաց զաշխարհն Արղնոյ և կոտորեաց զորդիսն Հարպիկ իշխանին։

Տուկիծն չարանախանձ ընդ դէմ Հայոց՝ որ և էառ զԱնի յԱրփասլանայ, և զԽաչիկ Կաթուղիկոսն տարաւ ՚ի Սատամիզօլ, և եդ ՚ի կալանս, թագաւորեաց ամս Ժ.։ Իսկ Գագիկ գնաց ՚ի Կոստանդնուպօլիս՝ վասն քննութեան հաւատոյ։ Իսկ իբրև դարձաւ ՚ի Կեսարիա, սպան զՄ`ետրապօլեան ընդ շանն իւրոյ՝ զոր Արմէն ձայնէր։

Տուժէն թագաւորեաց ամս Ա.։ Պղծութեամբ թագուհւոյն, զոր ելեալ զօրօք ՚ի Պարսս ըմբռնեցաւ յԱրփասլանայ. և հարկ եդեալ ՚ի վերայ նորա, եթող զնա. և ոչ ընկալան զնա ազգն Յունաց, այլ թագա-

ւորեցուցին զՄիխայէլ՝ որդի Տուկիծին. որ եւ բազում զօրօք 'ի Պարսս, եւ հասեալ 'ի Կարս, այրեաց զՀայոց եկեղեցին, եւ երդ-ւաւ՝ թէ եթէ դարձայց 'ի պատերազմէն, ջնջեցից զամենայն Հայս, եւ տամ զեկեղե-ցին՝ Հոռոմոց. որ յաղթեցին եւ Պարսիկք եւ զինքն տարան գերի։

Միխայէլ Թագաւորեաց ամս Ը։ Նա եւ պատերազմել ընդ Տուժէնայ, եւ յաղ-թեաց նմա. եւ զօրացն կալեալ՝ ագուցին նմա քուրձ՝ եւ կուրացուցին զաչս նորա՝ փորելով հրամանաւ Միխայէլ Թագա-ւորին. եւ նա 'ի ցաւոյն մեռաւ. այս եղեւ Տուժէնի զկնի ազատելոյն 'ի Պարսից. ո՜հ թէ՝ գերի մնացեալ էր՝ այլ լաւ էր, քան չարաչար մահն իւր պղծոյն Տուժէ-նի։ Իսկ Միխայէլ հրաժարեալ յաշխար-հէ՝ գնաց 'ի վանս, եւ անդ կեցեալ մեռաւ բարեպէս։

Աղէքս Թագաւորեաց ամս ԼԸ. եւ ա-միս Է։ Նա խաղաղացաւ աշխարհն՝

բայց Հռոմայեցիք՝ որ ելին 'ի վրէժխնդրութիւն քրիստոնէից յաղթեն Թուրքաց և Պարսից։ Իսկ Ալէքս որդին սատանայի ծովու և 'ի ցամաքի, մահաբար դեղօք նենգեաց նոցա. յորում ընկալցի զհատուցումն ըստ գործոց իւրոց։ Սա հրամայեաց կրկին մկրտութիւն տալ Հայոց, և ապա կոչել քրիստոնեայս։

Կալօժէն՝ որդի Ալէքսի՝ թագաւորեաց ամս ԺԴ։ Յաւուրս սորա առնու Դաւիթ զԱնի, և մեռանի, և թագաւորէ որդի նորա Դեմետր. և Տաճիկն էառ զՈւռհա 'ի Փռանկաց։

Մանիլ թագաւորեաց ամս ԼԷ։ Այս Մանիլ առաքեաց առ Հայրապետն Ներսէս Կլայեցին 'ի Թուին Հայոց ՈԺԴ. և խնդրեաց զմիաբանութիւն երկուց ազգաց. բայց ոչ կատարեցաւ. և ոչ գիտեմք՝ թէ 'ի խնամոցն Աստուծոյ է, կամ թէ

'ի մեղաց մերոց ոչ կատարեցաւ. ոմանք ասեն՝ թէ ԼԱ. ամ թագաւորեաց։

Ալէքս՝ որդի Մանիլի՝ թագաւորեաց ամս երկոտասան, և երկոտասան իշխանք՝ պահէին զնա։ Իսկ Անդրոնիկոս ոմն իշխան՝ որպէս թէ՝ ցաւակցաբար եկեալ և պահեալ զԱլէքս, զիպուկ ժամ գտեալ խեղդեաց զԱլէքս և զմայրն նորա, և ընկեց 'ի ծով, և ինքն թագաւորեաց, և էառ զկինըն Ալէքսի մատաղ, և ինքն չարածեր ամօք։ Յաւուրս նորա երեւեցաւ 'ի Կոստանդնուպօլիս արեղայ մի Հոռոմ, և զատանայ իւրն Աստուած պաշտէր, և մի շուն շրջեցուցանէր զհետ իւր, և նմա մատուցանէր զաղօթս իւր. և բազումք խոտորեցան յաղանդն նորա, որպէս մայր թագաւորին՝ զմասն կենաց փայտին եդ 'ի ներքոյ կօշկաց թագաւորին. զոր իմացեալ թագաւորն՝ ընկեց զմայր իւր 'ի պատուոյն, և զարեղայն այրեաց, և Ճ.Ա. այր և կին 'ի ծովն խեղդեաց։

Անդրոնիկոս չար ծերն թագաւորեաց և հալածեաց զիշխանսն. և կամէր սպանանել զԻսահակ իշխանն՝ որ էր յազգէն թագաւորաց. զոր խնդրեալ Իսահակ՝ ծանոյց զօրացն, և հաւատալ կորատեցին 'ի ծովն, և զմնացեալսն այրեցին հրով ։

Իսահակն՝ Սահակ թագաւորէր։ Հռոմանաւ զօրացն էած զնա Պատրիարքն՝ թագաւոր. բայց ոչ զարդարեցաւ հեղումն արեանց 'ի տանէ Յունաց մինչև սպանեցան, քանզի արժան էին. վասնզի կրեցին զբաժակ պատուհասի 'ի ՈՆ Գ. թուին Հայոց. և զի թէպէտ ոմանք թագաւորեցին, այլ աղօտ անուամբ՝ և ոչ զօրութեամբ. զոր և մեք թողցուք զմանրախուզութիւն, և կացուք զթագաւորութիւն զաւազանին երկաթեայ Կայսերաց. զոր անդէն յառաջնումն 'ի Հ Գ. երրորդ համար թագաւորացն 'ի բաց թողաք՝ զհետ լինելով Յունաց թագաւորացն. որ և խոստացաքդա-

նալ անդրէն 'ի շաւիղս մեր՝ որ զկնի Մի-
խայելին 'ի թուին Փրկչական ՌՃԳ.Օ.:

Գտայս սկսաւ յամի Տեառն ՉԳ.Ի. բառ Ֆրանկաց ԺԻ.երրորդ Կայսր՝ ինքնակալեալ ամս ԺԲ. և ամիս մի և Գ. օր: Սա թագաւորեաց Հրամանաւ Պապոյն. զի 'ի Կոստանդինոսէ մինչև 'ի սա՝ կայսրութիւնն անցեալ էր 'ի Կոստանդնուպօլիս. և այժմ վերադարձաւ յարևմուտս: Սա շինեաց ԽԳ. վանք, և եդ 'ի վերայ սեղոց վանացն Ա. Բ. Գ. Գ. մինչև Խ. ԽԳ. գիրն բառ Ֆրանկաց. և գրերն այնոքիկ էին ոսկի, և կշիռ ամեն գրի ԲՃ. մսխալ էր: Յաւուրս սորա եկին տաճիկքն յԱփրիկոյ, և աւերեցին զքաղաքն Ճ՛էնովա, և յաւարի առեալ զամենայն՝ գնացին յաշխարհն իւրեանց: Սա աղաչեաց զԵրուսաղէմ 'ի Տաճկաց՝ անձամբ գնալով անդ. և դարձեալ անտի հիւանդութեամբ մեռանի յաթոռի իւրում:

Լուտովիկոս սկսաւ յամի Տեառն ՊԺԴ. ինքնակալեալ ամս ԻԶ: Որդի գոլով Կարոլոսի՝ սա Բ. եղբարս ունէր, մինն՝ Թագաւորեալ Ալամանաց, և միւսն՝ Ապանիացւոց. և կացեալ բարուք քաղաքավարութեամբ՝ հանգեաւ 'ի Տէր: Յաւուրս սորա՝ ասեն՝ ոմանք բերել զմարմին աւետարանչին Մարկոսի յԱղեքսանդրիայ 'ի Վենետիկ քաղաք, և ամփոփեալ 'ի ներքոյ ասեն՝ 'ի յունվարի ԼԱ:

Լոթարիոս՝ որդի Լուտովիկոսի՝ սկսաւ յամի Տեառն ՊԽ. ինքնակալեալ ամս ԻԶ: Սորա երեք որդիքն ոխացեալ ընդ իրեարս՝ շատ պատերազմեցան զօրքն Գեր-մանացւոց. զոր լուեալ տաճկացն՝ որք յԱփրիկէ, անցին զծովն, և առին զՀռօմ, և քակեցին զեկեղեցին Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. և դարձեալ գնացին յաշխարհն իւրեանց. բայց 'ի ծովն ընկղմեցան ամենեքեան, և ոչ ոք փրկեցաւ 'ի նոցանէ:

Նա կայսրն թագաւորեցոյց զորդին իւր, և ինքն եղև կրօնաւոր։

Լուտովիկոս՝ որդի Լոտարիոսի՝ սկսաւ յամի Տեառն ՊԿ. ինքնակալել ամս ԻԵ։ Սա նախ՝ աբեղայ եղև, և յետոյ որպէս զՅուլիանոս կարգաթող եղև և գիւտահարեցաւ։ Յաւուրս սորա Խոաղայցւոց Գ. օր Գ. գիշեր արիւն անձրևեաց։

Գուարլոս՝ որ է Կարլոս Ճաղատ՝ սկսաւ յամի Տեառն ՊՕԼ. ինքնակալել ամս Գ. և ամիս Թ։ Սա նեղեաց զՊապն՝ մինչև կայսերացոյց զնա։ Սա կամեցաւ զերկրորդն Գոմպոլտիոյ 'ի գաւառին Գաղլիոյ՝ շինել քաղաք՝ որպէս զԿոստանդին Բիւզանդիա. բայց ոչ եհաս։ Սա դեղակուր եղև յումեմնէ Ջ՝հուէ Սեդեկիայ անուն. որ և մեռաւ։ Յաւուրս սորա սաստ Ակիլէայ 'ի Տաճկաց։

Գուարլոս երրորդ սկսաւ յամի Տեառն ՊՁԴ. ինքնակալել ամս ԺԲ։ Սա 'ի

Յովհաննէս փափէն ընկալաւ զԹագ օրհնութեան։ Յաւուրս սորա եղև սով սաստիկ ընդ ամենայն Իտալիայ։ Սա զուգաւորեալ ընդ տիկինն իւր՝ երդմամբ ասէր՝ զինքն և զտիկինն ոչ գիտել զիրեարս, այլ կոյսք գոլ՝ սուտ ասելով։ Իսկ տկարացեալ հոգւով՝ տկարացաւ և մարմնով և մեռաւ։

Անուրֆուս սկսաւ յամի Տեառն .... ինքնակալեալ ամս Օ։ Այս Անուրֆուս ցաւածին և տկար գոլով ընդ երկար յախտորս հիւանդութեան կալով՝ անբժշկական ցաւօք տանջեալ մեռանի։

Լուտովիկոս երրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Բ. ինքնակալեալ ամս Օ։ Ի սորին ժամանակին՝ Իտալացիք սկսան կայսրանալ, և բարձաւ կայսրութիւնն 'ի Ֆռանսիզացն. վասնզի ոչ օգնէին Հռոմայեցւոցն 'ի կարիսն. վասնորոյ ոչ կամեցան ունել կայսր 'ի Ֆռանսիզաց. վասնորոյ

ոմանք յԱլամաննեայց կայսրանայն, և ոմանք յԻտալիոյ, և ամօթ բերէին Հռոմայ։

Պրինկարիոս առաջին սկսաւ յամի Տեառն Ջ.Բ. ինքնակալել ամս Գ։ Սա կիրթ և վարժ և հմուտ պատերազմաց գոլով պատերազմեցաւ ընդ Հռոմայեցիս բազում զօրութեամբ։

Գոստուս առաջին Ալաման սկսաւ յամի Տեառն Ջ.Ժ.Ա. եղև ինքնակալեալ ամս Է։ Բայց ընդ կայսերս ոչ թուի սա. զի ոչ իշխեաց յԻտալիայ։ Յաւուրս սորա եկին Տաճիկքն յԻտալիայ, և աւերեցին զամենայն աշխարհն՝ և դարձան։

Պրինկարիոս երկրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Ժ.Բ. ինքնակալել ամս Բ։ Սա իշխեաց ամենայն Իտալիոյ, սակայն ոչինչ յիշատակագրութիւն արարեալ՝ մեռանի։

Հոփղոս առաջին սկսաւ յամի Տեառն Ջ.Խ.Օ. թագաւորեաց ամս Ժ.Գ։ Սա ոչ

Թուի ՚ի կարգս Կայսերաց. վասն զի ՚ի Գաղէն ոչ Թագաւորեցաւ: Սորին Վ․էղէրն Վ․ենտուլուզ գնայր գաղտ ՚ի գիշերի ՚ի մորին, և բարձեալ շալկաւն փայտ՝ բերեալ գնէր ՚ի գրունս աղքատաց: Իսկ ձեռամբ ժողովէր հասկ՝ ծեծէր և աղայր, և առնէր նշխարս և բաժանէր յեկեղեցիս վասն պատարագաց:

Գրնկարիոս երրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Խ. Հռիգոս յԱլամանիայ, և սա ևս յիտալիայ. վասն այն ՚ի Թուականս ոչ համարի: Գրնկարիոս ինքնակալեաց ամս Ը: Սա ՚ի հասակի երիտասարդութեան՝ ոչ հաւատայ զհացն լինել մարմին Քրիստոսի, բայց յետոյ հաւատաց:

Գրնկարիոս չորրորդ՝ սկսաւ յամի Տեառըն Ջ.ԽԸ. ինքնակալեալ ամս ԺԱ: Էր սա գազանաբարոյ և լիզող երկրի: Սա զկինն Լ.օթէր՝ որ ՚ի բաց Թողեալ էր՝ եդ ՚ի բանտի. և Թագաւորն Ալամանաց

Օդոս էառ զնա 'ի կնութիւն, և զԲրնկար չար թագաւորն յաքսորս առաքէր։

Օդոս երկրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Ծ.Թ.: Սա լուծոյց զպապն Յովհաննէս երկոտասաներորդ վասն վատնութեան և շռայլութեան իւրոյ, և զԼէոն պապն հաստատեաց. քանզի միշտ 'ի գետորայս և որսոց պարապէր, և յայտնի հրապարակաւ զկանայս հարճս առ ինքն պահէր, և որչափ զկրոնախատանաց գրելին իւրն՝ վասն այն, ոչ կամէր երբէք, և ընկեցաւ յաթոռոյն: Իսկ Հռոմայեցիքն զԲեննետիկոս երրորդ պապ արարին: Եւ Կայսերն լուեալ՝ եկն զօրօք 'ի վերայ նոցա՝ և յաղթեաց, և զՊապն Յովհաննէս դարձեալ կացոյց 'ի պապութեան:

Օդոս երրորդ ինքնակալեալ ամս ԺԹ. հալածեաց զՅոյնս 'ի Կալաբրիոյ. դաւգործեցին նմա զօրքն իւր. զոր փախեալ մազապուրծ եկն 'ի Հռոմ. և ժողովեալ

զօրս անթիւ՝ գնաց 'ի վերայ Պէնեւանդ քաղաքի. և առեալ զոսկերս առաքելոյն Բարդուղիմէոսի՝ տարաւ 'ի Հռոմ, և շի֊նեաց եկեղեցի 'ի վերայ նորա։

Օդոս չորրորդ՝ որդի Օդոսի երրորդի՝ սկսաւ յամի Տեառն Ջ.Կ.Օ.։ Սա եկեալ 'ի Հռոմ թագաւորեցաւ։ Սա կարգա֊ւորեաց զընտրողս, և էանց ընդ Կալլն՝ ե֊հաս 'ի Սաքսոնս ի Հայրենիսն իւր, և անդ կեցեալ մեռաւ։

Հենրիկոս երկրորդ սկսաւ յամի Տեա֊ռըն Ջ.ՂԸ. ինքնակալեալ ամս ԻԲ. և ամիս Ը։ Սա պսակեցաւ աթոռն կայ֊սերական ամս ԺԲ. և այնուհետև վարի ընտրութեամբ երկոտասան Պարոնայց և Կարդինալաց։ Կոչի սա Հենրիկոս առա֊ջին. վասնզի բազում թագաւորք եղեն Հենրիկոս անուն՝ բայց ոչ կայսր, այլ թագաւորք միայն ասին Հռոմայ՝ որպէս և Հենրիկոսն այն՝ որ 'ի վերն գրեցաւ, և

ոչ կոչեցեալ Թուեցաւ 'ի կարգս կայսե-
րաց՝ որ ոչ իշխեաց յԻտալիայ:

Գրատիոս երկրորդ սկսաւ յամի Տեառն ՅՀԵ. ինքնակալեալ ամս Ի: Նոյն պարապեաց աթոռն կայսերական ամս Գ: Սա բազում հսկմամբ կամեցաւ զաշխարհ խաղաղութեամբ պահել. և մինչ էր սա յաւուր միում՝ յորս, եմուտ նըն-ջեաց 'ի տան գունդին Լօբօլտոսի, որ փախուցեալ էր 'ի Կայսերէն, և 'ի գիշերին ծնաւ կինն Լօբօլտոսի. և կայսրն լուաւ՝ թէ՝ ծնեալ որդւոյ քեզ ժառանգ լինելոց է, ապա հրամայեաց կայսրն իւրոց մտերմացն, զի տարցեն զորդայն 'ի տեղի ինչ և սպանցեն, և զսիրտն և զլեարդն բերցեն իւրն նշան: Նոյն նորա նախապատակ մի սպանանեցին և զսիրտն տարան կայսերն նշան, և զմանուկն ձգեցին 'ի մորին. յետոյ կայսրն եգիտ զորդայն, և եբեր առ կինն իւր՝ ոչ գիտելով՝ թէ ում իցէ. և խորհեցան ասել՝ թէ՝ թագուհին ծնաւ զմանու-

կըն, քանզի զաւակ արու ոչ ունէր. և իբ-րև զարգացաւ, կասկածէր 'ի նմանէ կայս-րըն. և գրեաց գիր կնոջն՝ թէ սպա՛ն զդա. և ես ցպատանին: Իսկ նա մինչ առեալ զգիրն՝ գնայր, օթեցաւ 'ի գեօղ մի. և քա-հանայ ումն բացեալ զգիրն քերեաց՝ և փո-խանակ սպանելոյն գրեց թէ փեսայացո՛ զդա 'ի դուստրն իմ 'ի սոյն աւուր: Իսկ Կայսերուհին լուեալ հիացաւ յոյժ. բայց 'ի նոյն օրն և 'ի նոյն ժամն զուգեաց զնա ընդ դստերն իւրում. և Կայսրն իբրև լուաւ, հիացաւ, և յԱստուծոյ համարեցաւ ըղ-բանն, և սիրեաց զփեսայն: Արդ սոյն պա-տանիս յետ մահուան աներոջ իւրում ե-հաս 'ի Կայսերութիւնն, և զանեղի զամանն իւրոյ 'ի մէջ անտառին՝ շինեաց մեծահան-դէս Վանք, և պրուգեալ փարթամացոյց զնա անպատմելի փառաւորութեամբ:

Ձոփգուս երրորդ՝ փեսայ Գոստանդնու-սին՝ սկսաւ յամի Տեառն Ռ·ԿԵ. ինքնա-կալեալ ամս Լ.Օ: Յաւուրս սորա դատ

մարմին Աւետարանչին Մարկոսի 'ի Ներքոյ 'սեան միոյ, և սխեալ չենեալ զեկեղեցին, և անդ եդ զմարմինն 'ի Վենետիկ: Ի սորին իշխանութեանն գնացին Պիզանքն Ճենովեզքն և Վենեցիանքն և թափեցին զսուրբ աշխարհն 'ի ձեռաց բարբարոսաց, նաև զԿեսարիա Պաղեստինոյ. և իբրև առին զԿեսարիա, երիս բաժինս արարին, Վենեցեանքն առին զփարթամութիւն և և զինչս քաղաքին, Պիզանքն առին զքաղաքն և զՊարոնութիւն քաղաքին, Ճենովեզքն առին զմի թաս կանանչ զմրուխտ միափերթի՛ զոր գտին 'ի նոյն քաղաքն, որ ոչ գտին նման նմին 'ի մէջ աշխարհի, և տարան յաշխարհն իւրեանց:

Ֆոփզուս չորրորդ՝ որդի Ֆոփզուսի՝ ըսկսաւ յամի Տեառն Ռ.ՃԵ. ինքնակալեալ ամս ԺԸ: Սա 'ի կենդանութեան հօր իւրում՝ էառ զԿայսրութիւն, և կալեալ զհայրն իւր՝ եդ 'ի բանտի՝ մինչև մեռաւ:

Վասն որոյ և ինքն պատժեցաւ յԱստու-
ծոյ՝ ոչ լինելով իւրն զաւակ՝ անյիշատակ
մեռաւ։

Լօթօրիոս տունկ Սաքսոնայ՝ Օլթորեսն
Գոմս կոչի, սկսաւ յամի Տեառն ՌՃԻԵ.
ինքնակալեալ ամս ԺԲ. և երեք ամ յա-
ռաջ քան զինքնակալելն ՚ի Հռոմ՝ ՚ի յԱ-
լամանիայ կայսերացաւ։ Յաւուրս կայսե-
րութեան սորա սով սաստիկ եղև յԻ-
տալիայ, մինչ զի ՚ի սովոյն ամենայն երկիրն
Իտալիոյ ապականեալ անցաւ։

Գուռալոս չորրորդ սկսաւ յամի Տեառն
ՌՃԼԸ. ինքնակալեալ ամս ԺԵ։ Բայց
թագ կայսերութեանն օրհնութեամբ ոչ
ընկալաւ։ Յաւուրս սորա դարձեալ եղեն
բազում պարոնայք և ամիրք ի թափուռն
սուրբ աշխարհին. բայց ազգն Յունաց դա-
ւով բազում չարիս անցուցին ընդ նոսա
՚ի ճանապարհին. զի՝ խառնելով ՚ի մէջ
հացին և ալերին՝ անթիւ զօրս մահացու-

ցին։ Ի տէրութեան սորա ոմն Փիլոզոփայ Առնայդ անուն՝ յանդիմանէր զանօրէն մեծատունսն և զկարգաւորսն. զոր նախանձեալ ետուն կախել զնա 'ի փայտն։ Յաւուրս սորա կոտորեցան զօրքն Սալահատտինին՝ մերձ Երուսաղեմի. և ոմն Յովհաննէս անուն մեռաւ յաշխարհն Սպանիոյ, որ ապրեալ էր ՅԿԱ. ամի։

Փարիկ առաջին սկսաւ յամի Տեառն ՌՃԿԳ. ինքնակալեալ ամս ԼԸ։ Սա կամեցաւ գալ 'ի Հռոմ 'ի թագաւորել, և Հռոմայեցիք ելին պատերազմիլ ընդ նա, և զօրք թագաւորին կոտորեցին զՀռոմայեցիսն անխնայ, և բազում գերիս տարին. և Պապն Ադրիանոս բերեալ 'ի Հռոմ՝ թագեաց զնա, և պատուեաց զգերիսն։ Իսկ յետ մահուանն Ադրիանոսի՝ Գ. Պապ մի զէնի միոյն փոխեաց Փարիկին։ Յաւուրս սորա մեռաւ Սալահատտինն, և Սէֆրտինն եղբայր նորա՝ թագաւորեաց և տիրեաց յետ նորա վատ քան զնա։

Հռիգուս Զ.երրորդ՝ որդի Փորկան առաջնոյ՝ սկսաւ յամի Տեառն ՌՄ. ինքնակալեալ ամս ԼԵ. և ամիս Գ.: Յաւուրս սորա Վենեցիանքն առին զԿոստանդնուպօլիս, և թագեցան ՚ի Պապէն. և ԾԸ. ամ կալան Փռանկքն ՚ի Յունաց զքաղաքն: Յաւուրս սորա թագեցաւ Լևոն արքայ Հայոց ՚ի Կիլիկիայ ՚ի թուին Հայոց ՈԾԳ. և Լևոն թագաւորն էառ զԱնտիոք ՚ի Տուկէն:

Օգոս Հինգերրորդ սկսաւ յամի Տեառն ՌՄԸ. ինքնակալեալ ամս Գ.: Գործեալ ընկալաւ սա թագ ՚ի Պապէն. բայց հակառակ եղև Պապոյն. զոր բանադրեաց զնա Պապն, բայց ոչ կասեցաւ: Եւ Պապըն ըստ ընտրողաց կայսերացոյց զՓորիկըն, և բերեալ ՚ի Հռոմ և թագեաց զնա պատուով:

Փորիկ երկրորդ՝ որդի Հռիգուսի ինքնակալի Սիկիլիոյ՝ սկսաւ յամի Տեառն

ՌՄԺԴ. ինքնակալեալ ամս Լ.։ Սա Թագեցաւ 'ի Պապոյն Անորիոսէ 'ի Հռոմ։ Սա զորդին իւր՝ որ Թագաւորէր Ալամանաց, կալեալ եդ 'ի բանտի, և խեղդել ետ։ Ընդ այն Ֆորկայ ժամանակն ազգն Թաթարաց մտեալ յաշխարհն Ունկարիոյ և Պօլօնիոյ՝ պատերազմեցան և կոտորեցին զբշխանսն, և զամենեսեան զարս և զկանայս 'ի սուր սուսերի մաշեցին։ Յաւուրս սորա Թագաւորն Ֆռանցիոյ գնացեալ 'ի յԵգիպտոս զՏիմիաթ. . . և յետոյ եկեալ Սուլթանն Եգիպտոսի՝ կալաւ զնա, և երդուաւ նմա Թագաւորն՝ թէ՝ զնշան բանտի նորա դիցէ 'ի վերայ դրամին իւրոյ։ Եւ զերծաւ. զոր և երևի նշան բանտին 'ի վերայ դրամից Ֆռանցիզացն մինչև ցայսօր. և զգին փրկանաց նորա ետ ՃՌ. զմարկ արծաթոյ. զմարկ ոչ գիտեմ՝ զի՞նչ է յայնմ ժամանակի։ Ի թուին Քրիստոսի ՌՄԿԶ. անչափ բազում Տաճկացն Թունզցիք անցին ընդ ծովն՝ և մտին ի Սպանիայ. և Տաճիկքն՝ որք բնակեալ էին յառաջ ի ըՍ-

դանիայ, միաբանեալ ընդ նոսա՝ պատերազմեցան ընդ քրիստոնեայսն. ուր թէպէտ բազում քրիստոնեայք կոտորեցան, բայց յաղթեցին Թունուզցոյն, Դ.Ռ. ձիաւորս և հազարս հազարաց հետևակաց կոտորեցին, և աւար առին զամենայն իջևանս և զկարասիս։

Ռոտոլփուս Տուկն եղև ընտրեալ 'ի կայսրութիւնն՝ յամի Տեառն Ռ.Մ.Հ.Գ.։ Սա թագ և անուն ինքնակալութեան ոչ ժամանեաց առնուլ. զի Պապն Գրիգորիս հրամայեաց նմա անձամբ գնալ ընդ Պապոյն 'ի յազատութիւն սուրբ աշխարհին, և յետ յաղթութեանն թագիլ 'ի Պապէն։ Նա ուխտեաց, բայց ոչ ժամանեաց. և իշխեաց ամս ԺԸ։ Նա Տաճիկքն տիրեցին բոլոր աշխարհին սրբոյն, և բարձան քրիստոնեայքն 'ի սուրբ աշխարհէն։

Ադոլֆ Տուկն Նազօյին եղև ընտրեալ թագաւոր Ալամանաց և Հռոմայեցւոց,

այսինքն՝ ինքնակալել սկսաւ յամի Տեառըն ՌՄԿԲ. թագաւորեաց Ալամանաց զամս Օ: Յաւուրս սորա Աշրաֆ Սուլթանն Եգիպտոսի էառ զՊտողմայն, որ էր Կաթուղիկոս Տէր Ստեփաննոս մականուն Հռոմկլայեցի: Նա զԿ.Ս. ոզի և զԿաթուղիկոսն տարաւ գերի ՚ի Մըսր՝ ՚ի բանտ և ՚ի ծառայութիւն. և անդ առ մահ յաշխարհն իւր: Իսկ Սուլթանն զաջ սրբոյ Լուսաւորչին և զայլ սրբութիւնսն առեեալ ՚ի նա՝ և պատուաւոր արս Խ. զոր և կամեցաւ Կաթուղիկոսն, և ուղարկեաց զնա յաթոռն իւր ՚ի թուին Հայոց ՉԽԱ. յաւուրս թագաւորին Հեթմոյ՝ որ վասն Նաւագատկին ասաց զոտանաւորն, Որ ծառայեալս եմ բիւր ախտից: Նա Լ.Ս. անձինք մնացին յԵգիպտոս՝ մինչև սպանեցին: Նա սա և զԵրուսաղէմ և զԱ.քա և զամենայն ծովեզերեայսն, և ջնջեաց զքրիստոնէութիւնն յայն աշխարհէն:

Ալպերթոս դուքն Օստրիոյ ընտրի 'ի կայսրութիւն յամի Տեառն ՌՄԳԸ. թագաւորեալ ամս Ժ.: Սա էր որդի Ադօլ-ֆօսին նախ գրեցելոյ, և ընկալաւ օրհնութիւն 'ի պապէն: Յաւուրս սորա Թաթարք և Հայք գնացին 'ի վերայ Սուլթանին Մսրայ Նասրի, և առին զԵրուսաղէմ՝ զՄսրը՝ զԴամասկոս և զԵրուսաղէմ՝ ամենայն իշխանութեամբ աշխարհին և եկեղեցեօք. և Խանն շնորհեաց թագաւորին Հայոց Հեթմոյ՝ զամենայն փախուցեալ Քրիստոնեայսն, զոր ժողովեաց յԵրուսաղէմ. և մեծահանդէս տօն կատարելով եկաց անդ զաւուրս ԺԵ. և դարձաւ 'ի Դամասկոս: Ընդ այս ժամանակս 'ի թուին Հայոց ՉԾԶ. սպանաւ թագաւորս Հեթում և որդին Լեւոնի եղբօր նորա 'ի Թաթար Պուլղոյ 'ի Սիս Կիլիկիոյ:

Հոփգուս եօթներորդ եղև ընտրեալ 'ի կայսրութիւն յամի Տեառն ՌՅԸ. նախ՝ յԱլամանիայ և յԻտալիայ ամս Գ.

և յետոյ եկեալ 'ի Հռոմ՝ ըստ սահմանի կայսերաց՝ թաղիւ երկաթեայ թաղեցաւ 'ի Պալատն Կլէմէնթոսէ Ն.երրորդէ: և 'ի Նիւզա քաղաքի՝ յոր առնի փոխման Կուսին՝ ընկալաւ զհաղորդութիւնն յումեմնէ Գրաթէ 'ի կարգէ Նրիկաթուրաց. զոր խառնեալ մահադեղ 'ի սուրբ խորհուրդն՝ ետ Կայսերն. որ 'ի նոյն օրն խօթացաւ, և յետ ինն աւուրն՝ մեռաւ. զոր ամենայն ոք գիտաց զմահ թագաւորին 'ի քահանայէն եղեալ: Յաւուրս սորա թագաւորն Գռանցիոյ Գիլիպն կոչեցեալ գեղեցիկ՝ մինչ որսայր ի մայրիս՝ եհար զնա վարազ խոզ և ձեղջեաց զփոր նորա. և յետ երեք աւուր մեռաւ: Նաւ էր կին նորա յղի, և ծնաւ արու զաւակ. և յետ Ն. աւուր և նա մեռաւ:

Զկնի մահուանն ինքնակալին Հռիգուսի՝ որ էր յամի Տեառն Ռ.Ճ.Ղ.Գ. ընտրողքն կայսերաց ընտրեցին երկուս 'ի կայսերութիւն, մի՝ զԼուտովիկ տուկն Պա-

ւարիոյ, և միւսն՝ տուկն Գօրանդանիոյ. զոր
երկոքին մարտեալ 'ի վերայ իշխանու-
թեան՝ յաղթեաց Լուտովիկ, և կալեալ
զտուկն Գօրանդանիոյն՝ ետ 'ի բանտի. և
անդ մեռաւ։ Իսկ Պապն ոչ ետ նմա թագ։
Իսկ իբրև ընդդիմացաւ Պապին, նզովեալ
բանադրեցաւ 'ի նմանէ։ Իսկ Լուտովիկն՝
հակառակ Պապին՝ զոմն պապացոյց, և 'ի
նմանէ թագեցաւ. և ՌՅԼԸ. ամ զեկեղեցին
հալածեաց։ Իսկ դարձեալ 'ի Կլէնց պա-
պէն նզովեցաւ, և հրամանաւ նորա ընտ-
րեցաւ 'ի կայսրութիւնն Գառոլոս կ՚չե-
ցեալն չորրորդ։

Գառոլոս չորրորդ սկսաւ յամի Տեառն
ՌՅԽԶ. ընտրեալ եղև 'ի կայսրութիւն,
և կալաւ զամս ԼԲ։ Սա ընտրեալ եղև 'ի
կենդանութեան Լուտովիկ Պաւարին հա-
կառակ կայսր. և իբրև ընտրեցին, առժա-
մայն ազդեցին պապին. պապն կայսրա-
ցոյց զնա հանդիսական զրով, և հաստա-
տեաց անդ. թէպէտ և զկնի սոցին բա-

զումբ թագաւորեցին՝ թէ ի Սպանիայ թէ 'ի Գաղղիայ, թէ Գերմանիայ և թէ 'ի Կոստանդնուպօլիս. բայց մին զմիով ելանելով՝ ոչ ցուցին արիութիւնս և ոչ գործս քաջութեան, այլ որկորոցն հետևելով՝ և զաղխս մեծացուցանելով կընատ բարուք անցուցին զաւօրեայն խըեանց զկեանս: Վասն այն ոչ վարկայ ես ըմբռն շարագրել զնոսա 'ի գաւազանս կարգի քաջաց և երևելեաց: Ընդ մատուցմէք փառք և գոհութիւն ամենազօր տէրութեանն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ԾԱՆՈՒՑ. Թուղթն շարագրեցաւ կարգ թագաւորացս և անցք աշխարհիս Հայոց 'ի Մինաս վարդապետէ Համթեցւոյ:

БИБЛИОТЕКА